EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ՉՈՐՐՈՐԴ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ԱՇՈՏ ՄԱԼԽԱՍՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(գանգատ թիվ 35814/14)

ՎՃԻՌ

Հոդված 2 (նյութաիրավական եւ ընթացակարգային) • Դրական պարտավորություններ • Դիմումատուի որդու մահը պարտադիր զինվորական ծառայության ժամանակ, որը զորակոչվել էր բժշկական այն ախտորոշման անփույթ անտեսմամբ, որի համաձայն նա ծառայության համար պիտանի չէր • Ռազմական իշխանության մարմինների եւ բուժաշխատողների՝ սխալ որոշմամբ կամ անփութությամբ պայմանավորված վարքագիծը չհիմնավորված կերպով վտանգել է դիմումատուի որդու կյանքը • Քրեական գործով անարդյունավետ եւ տեւական քննությունն ի վերջո դադարեցվել է վաղեմության ժամկետն անցնելու պատճառով

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ

11 հոկտեմբերի 2022թ.

Սույն վճիռը վերջնական է դառնում Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված դեպքերում: Այն կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների:

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Աշոտ Մալխասյանն ընդդեմ Հայաստանի գործով,

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Չորրորդ բաժանմունք), հանդես գալով Պալատի հետեւյալ կազմով՝

Գաբրիել Կուչկո-Ստադլմայեր [Gabriele Kucsko-Stadlmayer]՝ *Նախագահ,*

Թիմ Այքը [Tim Eicke],

Յոնկո Գրոզեւ [Yonko Grozev],

Արմեն Հարությունյան [Armen Harutyunyan],

Պերե Պաստոր Վիլանովա [Pere Pastor Vilanova],

Յոլիեն Շուկինգ [Jolien Schukking],

Անա Մարիա Գեռա Մարտինս [Ana Maria Guerra Martins]՝ *դատավորներ,*

եւ Իլզե Ֆրայվըրթ [Ilse Freiwirth]՝ *Բաժանմունքի քարտուղարի տեղակալ,*

հաշվի առնելով՝

«Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (Կոնվենցիա) 34-րդ հոդվածի համաձայն Հայաստանի քաղաքացի պրն Աշոտ Մալխասյանի (դիմումատու) կողմից ընդդեմ Հայաստանի Հանրապետության՝ 2014 թվականի հուլիսի 23-ին Դատարան ներկայացված գանգատը (թիվ 35814/14),

դիմումատուի որդու մահվան վերաբերյալ բողոքների մասին Հայաստանի Հանրապետության կառավարությանը (Կառավարություն) ծանուցելու եւ գանգատը մնացած մասով անընդունելի հայտարարելու վերաբերյալ որոշումը,

Դատարանի կանոնակարգի 41-րդ կանոնի համաձայն՝ 2022 թվականի ապրիլի 28-ի՝ գանգատն առաջնահերթ կարգով քննելու մասին որոշումը,

կողմերի դիտարկումները,

2022 թվականի սեպտեմբերի 20-ին անցկացնելով դռնփակ խորհրդակցություն,

կայացրեց հետեւյալ վճիռը, որն ընդունվեց նույն օրը.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Գործը վերաբերում է պարտադիր զինվորական ծառայության ժամանակ դիմումատուի որդու մահվանը, որը տեղի է ունեցել զորակոչի ընթացքում ռազմական իշխանությունների կողմից ենթադրաբար նրա առողջական վիճակը պատշաճ կերպով չգնահատելու արդյունքում, ինչպես նաեւ դրան հաջորդած քննությանը: Գործում բարձրացված են Կոնվենցիայի 2-րդ հոդվածով սահմանված հարցեր:

ՓԱՍՏԵՐԸ

2. Դիմումատուն ծնվել է 1946 թվականին եւ ապրում է Երեւանում: Նրան ներկայացրել է Երեւանում գործող իրավաբան տկն Ս. Սաֆարյանը:

3. Կառավարությունը ներկայացրել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր ներկայացուցիչ պրն Գ. Կոստանյանը, իսկ այնուհետեւ՝ միջազգային իրավական հարցերով Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ պրն Ե. Կիրակոսյանը:

4. Գործով փաստերը կարելի է ամփոփել հետեւյալ կերպ:

I. ԳՈՐԾԻ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

5. Դիմումատուն 22 տարեկան հասակում մահացած Ա. Մալխասյանի հայրն է:

6. Համալսարանն ավարտելուց հետո 2009 թվականի ամռանն Ա. Մալխասյանը զորակոչվել է հայկական բանակ: 2009 թվականի հունիսի 25-ին նրան զինվորական ծառայության համար պիտանի են ճանաչել եւ հաջորդ օրն ուղարկել են այն զորամասը, որտեղ նա նշանակվել է զինվորական ծառայություն անցնելու համար:

7. 2009 թվականի հուլիսի 4-ին Ա. Մալխասյանը կորցրել է գիտակցությունը, եւ նրան փոխադրել են զինվորական հոսպիտալ, որտեղ նրա մոտ կլինիկական մահ է գրանցվել: Նրա բժշկական քարտում նշվել է հետեւյալ ախտորոշումը՝ հետսրտաթոքային վերակենդանացման համախտանիշ եւ ստամոքսաղիքային արյունահոսություն:

8. 2009 թվականի հուլիսի 5-ին Ա. Մալխասյանին օդային շտապօգնության միջոցով շտապ տեղափոխել են Երեւանի կենտրոնական զինվորական հոսպիտալ, որտեղ նրան կոմայի մեջ տեղավորել են ինտենսիվ թերապիայի բաժանմունքում: Նրա մոտ ախտորոշել են հետսրտաթոքային վերակենդանացման համախտանիշ, գլխուղեղի այտուց (ուղեղի ուռուցք), երկկողմանի շնչանցումային թոքաբորբ եւ ստամոքսաղիքային արյունահոսություն: Նույն օրը նա մահացել է:

II. Ա. ՄԱԼԽԱՍՅԱՆԻ ԱՌՈՂՋԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ ՆԱԽՔԱՆ ԶՈՐԱԿՈՉՎԵԼԸ

9. 2008 թվականի հուլիսի 10-ին Ա. Մալխասյանի համար շտապօգնություն է կանչվել. նա ուժգին փսխել է մուգ գույնի փսխազանգված, չափազանց թույլ է եղել եւ որովայնային ցավեր է ունեցել: Այդ ժամանակ նրա մոտ ախտորոշել են սրտի

անբավարարություն, ռեֆլյուքս-էզոֆագիտ (կերակրափողի լորձաթաղանթի բորբոքում), ստամոքսամուտքի լորձաթաղանթի խոց, Մելորի-Վեյսի համախտանիշ (ստամոքսի եւ կերակրափողի միջեւ լորձաթաղանթի պատռվածքի կամ խոցի հետեւանքով առաջացած արյունահոսություն), մակերեսային ստամոքսաբորբ եւ կայուն արյունահոսություն: Երեւանի Միքայելյանի անվան հիվանդանոցում ստացած բուժման արդյունքում նրա վիճակը կայունացել է, եւ արյունահոսությունը դադարել է: 2008 թվականի հուլիսի 21-ին նրան դուրս են գրել եւ հրահանգել են մնալ ստամոքսաղիքաբանի հսկողության տակ եւ հետազոտվել երեսուն օր հետո:

10. 2008 թվականի դեկտեմբերին Ա. Մալխասյանը վատառողջ լինելու պատճառով հետազոտություններ է անցել: Նրա մոտ, *inter alia* (*ի թիվս այլնի*), ախտորոշվել է կերակրափողի ճողվածք, Ջիլբերտի համախտանիշ (արյան հոսքում չկապված բիլիռուբինի բարձր մակարդակներ), եւ նրան նշանակվել է դեղորայք եւ հատուկ սննդակարգ: Նրան նաեւ խորհուրդ են տվել քնել գլուխը բարձր եւ չկռանալ կամ ծանրություն չբարձրացնել:

III. Ա. ՄԱԼԽԱՍՅԱՆԻ ԶՈՐԱԿՈՉԸ

11. 2009 թվականի մարտին Ա. Մալխասյանին հրավիրել են ներկայանալ Արաբկիրի զինվորական կոմիսարիատ՝ նախնական բժշկական զննություն անցնելու համար:

12. Նշված օրը նա գնացել է Արաբկիրի զինվորական կոմիսարիատ եւ համապատասխան բժշկական հանձնաժողովին է ներկայացրել իր բժշկական քարտը:

13. 2009 թվականի ապրիլին նա խնդրել է անցնել լրացուցիչ բժշկական հետազոտություն, սակայն Արաբկիրի զինվորական կոմիսար Ա.Ու.-ն հրաժարվել է ուղեգրել նրան՝ հետագա բժշկական հետազոտություն անցնելու համար: Դրանից

հետո դիմումատուն գնացել է Ա.Ու.-ի մոտ եւ խնդրել նրան ստորագրել գրություն, որով իր որդին կուղարկվեր բժշկական հետազոտությունների: Ա.Ու.-ն հրաժարվել է շատ կոպիտ ձեւով՝ ասելով, որ դիմումատուի որդին ամեն դեպքում զորակոչվելու է:

14. 2009 թվականի մայիսի 25-ին դիմումատուն որդուն լրացուցիչ բժշկական հետազոտության ուղարկելու վերաբերյալ գրավոր դիմում է ներկայացրել:

15. 2009 թվականի մայիսի 29-ին այդ դիմումը Ա. Ու.-ի կողմից մերժվել է այն հիմքով, որ ներկայացված բժշկական փաստաթղթերը բավարար էին այն մասին եզրահանգում կատարելու համար, որ Ա. Մալխասյանը զինվորական ծառայության համար պիտանի էր:

16. Դիմումատուն նմանատիպ դիմումներ է ուղարկել Հայաստանի զինվորական կոմիսարին եւ Հայաստանի զինված ուժերի աշխատակազմի ղեկավարին:

17. 2009 թվականի հունիսի 12-ին Հայաստանի զինվորական կոմիսարը Ա. Ու.-ին կարգադրել է Ա. Մալխասյանին կրկին ներկայացնել Կենտրոնական բժշկական հանձնաժողով՝ զինվորական ծառայության համար նրա պիտանիությունը որոշելու համար:

18. Դրանից հետո Ա. Ու.-ն ուղեգրել է Ա. Մալխասյանին 2009 թվականի հունիսի 15-ից 19-ը անցնելու լրացուցիչ բժշկական հետազոտություններ Երեւանի Էրեբունի բժշկական կենտրոնում, որից հետո համապատասխան հանձնաժողովը պետք է եզրակացություն ներկայացներ նրա առողջական վիճակի մասին: Ա. Ու.-ի ցուցումով Արաբկիրի զինվորական կոմիսարիատի բժշկական հանձնաժողովի վիրաբույժ Մ.Ս.-ն ներկա է եղել Էրեբունի բժշկական կենտրոնում Ա. Մալխասյանի հետազոտություններին:

19. Էրեբունի բժշկական կենտրոնում բժշկական հետազոտությունների ընթացքում Ա. Մալխասյանին հետազոտել են մասնագետներ, այդ թվում՝ ստամոքսաղիքաբանը, որը նրա մոտ ախտորոշել է խոցային գաստրիտ, մակերեսային տասներկումատնյա աղիքի բորբոքում, ստամոքսաղիքային

մոտորիկա (շարժունակություն) եւ կերակրափողի ճողվածք, եւ նյարդաբանը, որը նրա մոտ ախտորոշել է վեգետատիվ անոթային դիստոնիա՝ կրիզով (նոպայով):

20. 2009 թվականի հունիսի 19-ին համապատասխան հանձնաժողովն Ա. Մալխասյանի բժշկական հետազոտությունների արդյունքների հիման վրա ներկայացրել է բժշկական եզրակացություն՝ հետեւյալ վերջնական ախտորոշմամբ. հոգեբանական սթրեսով պայմանավորված ստամոքսաղիքային մոտորիկայի խանգարումներ:

21. 2009 թվականի հունիսի 25-ին Ա. Մալխասյանը կանչվել է Կենտրոնական բժշկական հանձնաժողով, որը նրան զինվորական ծառայության համար պիտանի է համարել:

IV. ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

22. 2009 թվականի հուլիսի 4-ին Ա. Մալխասյանի եղբայրը գնացել է զորամաս նրան այցելության: Տեղեկանալով, որ Ա. Մալխասյանն այդ օրն ուշաթափվել է եւ արագ հասցվել հոսպիտալ, նրա եղբայրը հաղորդում է ներկայացրել առ այն, որ Ա. Մալխասյանը նախքան զորակոչվելը տառապել է մի շարք հիվանդություններով, եւ որ նա անօրինականորեն է զորակոչվել բանակ:

23. Նույն օրը Պաշտպանության նախարարության քննչական ծառայության երկրորդ կայազորի քննչական վարչությունը որոշում է կայացրել այդ դեպքի առթիվ Քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն քրեական վարույթ հարուցելու վերաբերյալ (տե՛ս ստորեւ 59-րդ պարբերությունը):

24. 2010 թվականի հուլիսի 5-ին Չորրորդ կայազորի քննչական վարչությունը քննություն է սկսել Մալխասյանի մահվան հանգամանքների առնչությամբ:

25. Նույն օրը պահանջվել է դիահերձման իրականացում:

26. 2009 թվականի հուլիսի 6-ին Պաշտպանության նախարարը պահանջել է

Մալխասյանի մահվան հանգամանքների ներքին քննության իրականացում:

27. 2010 թվականի հուլիսի 10-ին Պաշտպանության նախարարության քննչական վարչությունը ստանձնել է քննության իրականացումը: 2010 թվականի հուլիսի 4-ին հարուցված վարույթը եւ Մալխասյանի մահվան հանգամանքների շուրջ քննությունը միացվել են մեկ վարույթում:

28. Մալխասյանի մահվանից կարճ ժամանակ անց հարցաքննվել են նրա ծառայակից ընկերներից ոմանք եւ նշել, որ նա անառողջ տեսք ուներ, չափազանց գունատ էր ու նիհար:

29. 2009 թվականի հուլիսի 29-ին հարցաքննվել է Զորակոչիկների հավաքագրման կետի բժշկական հանձնաժողովի նախագահ Ա.Խ.-ն: Նա, *inter alia*, նշել է, որ 2010 թվականի հուլիսի 5-ին տեղեկանալով, որ Ա. Մալխասյանին տեղափոխել են Կենտրոնական զինվորական հոսպիտալ, գնացել է այնտեղ, եւ որ իրեն ներկայացված բժշկական փաստաթղթերը բավարար էին կասկածի տակ դնելու Էրեբունի բժշկական կենտրոնում Մալխասյանի առողջական վիճակի վերաբերյալ արված եզրակացությունը: Ծանոթանալով Էրեբունի բժշկական կենտրոնից վերցված բժշկական քարտի տվյալներին եւ հետազոտությունների արդյունքներին եւ դրանք համեմատելով այդ եզրակացության բովանդակության հետ՝ նրան հաջողվել է ներկայացնել, որ այդ հետազոտությունները դիտավորյալ հաշվի չէին առնվել, որպեսզի Ա. Մալխասյանը զինվորական ծառայությանը պիտանի համարվի: Եթե համապատասխան տեղեկատվությունն արտացոլվեր եզրակացության մեջ, նա ծառայության համար ոչ պիտանի կհամարվեր:

30. Նույն օրը հարցաքննվել է Պաշտպանության նախարարության զինվորական բժշկական վարչության պետը եւ մասնավորապես նշել է, որ Ա. Մալխասյանը զինվորական ծառայության համար ոչ պիտանի կհամարվեր, եթե զինվորական կոմիսարիատը եւ Կենտրոնական բժշկական հանձնաժողովը պատշաճ կերպով ուսումնասիրած լինեին նրա բժշկական քարտը:

31. 2009 թվականի օգոստոսի 26-ին Պաշտպանության նախարարը գործի ներքին քննության արդյունքների հիման վրա հրաման է արձակել, որով

Ա. Մալխասյանի զորակոչի գործընթացին ներգրավված մի շարք անձանց, այդ թվում՝ Ա.Ու.-ին եւ Ա.Խ.-ին նկատողություն է տրվել: Համապատասխան մասերը շարադրվել են հետեւյալ բովանդակությամբ.

«...Կենտրոնական բժշկական հանձնաժողովը, ունենալով շարքային [Ա. Մալխասյանի] հիվանդությունների մասին բոլոր փաստաթղթերը, պարտավոր էր այլ վերաբերմունք ցուցաբերել. ուղարկելով մանրակրկիտ հետազոտությունների՝ [նրա] զորակոչի վերաբերյալ պետք է ճիշտ որոշում կայացներ:

...

- Արաբկիրի զինկոմիսարիատի բժշկական հանձնաժողովը, առանց ստացիոնար հետազոտության, շարքային [Ա. Մալխասյանին] ճանաչել է «պիտանի շարային ծառայության համար» այն դեպքում, երբ զինկոմիսարիատի պայմաններում բժշկական հանձնաժողովը դժվարությամբ էր որոշել նրա ստամոքսի վիճակը եւ ստոծանու ճողվածքը, որոնց մասին գրված էր բժշկական փաստաթղթերում,

- զինվորական կոմիսարը շարքային [Ա. Մալխասյանին] հետազոտության համար ուղեգիր է տվել միայն վերադասի կարգադրությունից հետո,

- զինկոմիսարիատը, «Էրեբունի» բժշկական կենտրոնը, Կենտրոնական բժշկական հանձնաժողովը, շարքային [Ա. Մալխասյանի] ներկայացրած ... բժշկական փաստաթղթերին բավարար ուշադրություն չեն դարձրել,

- «Էրեբունի» բժշկական կենտրոնում ս.թ. հունիսի 15-19-ը կատարված հետազոտությունների արդյունքներն օբյեկտիվ եւ լիարժեք չեն եղել, ինչի հիման վրա զինկոմիսարիատը եւ կենտրոնական բժշկական հանձնաժողովը [Ա.Մալխասյանին] ճանաչել են «պիտանի շարային ծառայության համար»,

- [Ա.Մալխասյանի] անձնական գործում չեն կարվել ... բժշկական փաստաթղթերը,

- անձնական գործում փաստաթղթերի հերթական համարները (16-22) նշված են ուղղումներով եւ փոփոխումներով,

...

- [Ա. Ու.-ն], ըստ [Ա.Մալխասյանի] եղբոր հայտարարության, անհարկի վիճաբանել է [Ա.Մալխասյանի] հարազատների հետ՝ նրանց նկատմամբ ցուցաբերելով անհարգալից վերաբերմունք, ինչպես նաեւ կասկած է հայտնել ծնողի ներկայացրած փաստաթղթերի իսկության վերաբերյալ ...

Պատասխանատու անձանց պատժելու եւ ապագայում նման միջադեպերի առաջացումը կանխելու համար, կարգադրում եմ՝

1. Նախազգուշացում [պետք է տրվի] [Ա. Ու.-ին] «ծառայության համար ոչ ամբողջապես համապատասխան լինելու» վերաբերյալ

... կոպիտ խախտումների համար ...

2. «խիստ նկատողություն» հետեւյալ անձանց.

- [Ա. Հ.-ին]՝ Արաբկիրի զինվորական կոմիսարիատի զորակոչի բաժանմունքի պետ,

- [Ա. Խ.-ին] ...

3. «Նկատողություն» հետեւյալ անձանց.

[Հ. Սա.-ին]՝ Արաբկիրի զինվորական կոմիսարիատի քարտուղար ...

... [անընթեռնելի]

4. ... [անընթեռնելի]

- ներգրավել ավելի բարձր որակավորում ունեցող բժիշկ մասնագետների բժշկական հանձնաժողովի կազմում՝ զորակոչի ընթացակարգին մասնակցելու համար ...

- ուսումնասիրել, թե ինչպես են [Ա. Մալխասյանի] բժշկական հետազոտություններն իրականացվել «Էրեբունի» բժշկական կենտրոնում:

5. - Բժշկական կոմիսարի ուշադրությունը [պետք է հրավիրվի] ... Արաբկիրի զինվորական կոմիսարիատում հաշվառման թերությունների, ...բժիշկ մասնագետների ...

...

8. [Հայաստանի] զինվորական կոմիսարին՝

...

- ուշադրություն դարձնել զորակոչիկների եւ նրանց հարազատների կողմից ներկայացված բժշկական փաստաթղթերին, մանրամասն ուսումնասիրել եւ արդարացի որոշում կայացնել յուրաքանչյուր դիմումի (բողոքի) վերաբերյալ ...»:

32. 2009 թվականի օգոստոսի 12-ին ստացվել է դիահերձման եզրակացությունը: Դատաբժշկական փորձագետը եզրակացրել է, որ Ա. Մալխասյանի մահվան պատճառ է հանդիսացել պսակաձեւ զարկերակի

հիվանդությունը, որն առաջացել է ռեումատիկ պանկարդիտից, սրտամկանախտից, ռեումատիկ կորոնարիտից, սփռուն կարդիոսկլերոզից, աորտային եւ թոքային փականների (կիսալուսնաձեւ փականներ) շարակցական հյուսվածքի խանգարումներից, որոնցից հանգուցյալը տառապել է, երբ դեռ ողջ էր, եւ որոնք էլ ուղղակիորեն կապ ունեն նրա մահվան հետ: Եզրակացության մեջ նաեւ նշվել է, որ Ա. Մալխասյանն ունեցել է Մելորի-Վեյսի համախտանիշ, քրոնիկական էոզոֆագիտով՝ կերակրափողի մակերեսային էրոզիաներով եւ քրոնիկական գաստրիտով, որոնք նրա մահվան հետ պատճառական կապ չեն ունեցել:

33. 2009 թվականի սեպտեմբերի 14-ին հարցաքննվել է Ա. Ու.-ն եւ, inter alia, նշել է, որ ինքն է հանձնարարել Ա. Մալխասյանի անձնական գործից հանել տասը բժշկական փաստաթղթերը: Իր եւ զինվորական կոմիսարիատի բժշկական հանձնաժողովի մոտ խորը կասկածներ են եղել Ա. Մալխասյանի՝ իսկապես վատառողջ լինելու վերաբերյալ եւ ինքը հետեւաբար կարգադրել է Մ. Ս.-ին ներկա գտնվել Էրեբունի բժշկական կենտրոնում նրա հետազոտությանը: 2009 թվականի հունիսի 15-ից 19-ը Մ. Ս.-ն ներկա է գտնվել Ա. Մալխասյանի բժշկական հետազոտություններին՝ օբյեկտիվություն ապահովելու նպատակով:

34. 2010 թվականի հունվարի 26-ին քննիչը կարգադրել է դատաբժշկական փորձագետների հանձնաժողովի կողմից դատաբժշկական փորձաքննության անցկացում:

35. 2010 թվականի մայիսի 3-ին դատաբժշկական փորձագետների հանձնաժողովը ներկայացրել է իր եզրակացությունը, որի համապատասխան մասերը շարադրված են հետեւյալ բովանդակությամբ.

> «... դատաբժշկական փորձաքննությամբ հայտնաբերված՝ որպես մահվան պատճառ հանդիսացած... հիվանդություններն առաջացել են 2008թ.-ից առաջ, որոնք հիմնավորվում են ինչպես դիակի օրգանների մորֆոլոգիական փոփոխություններով, այնպես էլ 2008թ. Միքայելյանի անվան հիվանդանոցում կատարված էլեկտրասրտագրի վրա առկա փոփոխությունների ... մասին վկայող տվյալներով ...
>
> ... ֆիզիկական եւ փսիխոէմոցիոնալ ծանրաբեռնվածությունը կարող էին ունենալ բացասական ազդեցություն [Ա.Մալխասյանի] մոտ սիրտ-անոթային առկա հիվանդության վրա, այդպիսով վատթարացնելով նրա առողջական վիճակը:

... անհրաժեշտ էր Ա.Մալխասյանի նկատմամբ բժշկական տեսանկյունից սահմանել հատուկ սննդակարգ, ֆիզիկական եւ փսիխոէմոցիոնալ ծանրաբեռնվածության սահմանափակում: Եվ, չնայած այն հանգամանքին, որ տվյալ դեպքում ստամոքս-աղիքային հիվանդությունները մահվան պատճառի հետ չեն գտնվել ուղղակի պատճառական կապի մեջ, սակայն նրանք կարող էին պատճառ հանդիսանալ ... որպես նպաստող գործոն մահվան պատճառի առումով:

... Երեբունի ԲԿ-ի հիվանդության պատմագրի հետազոտությունների տվյալներով Ա. Մալխասյանի մոտ հայտնաբերվել է էրոզիվ անտրալ գաստրիտ, մակերեսային դուոդենիտ, որոնք չեն արձանագրվել առողջական վիճակի ակտի մեջ ...

Եթե Ա.Մալխասյանը ենթարկվեր համապատասխան հետազոտությունների ... ապա հնարավոր է, որ նրա մոտ հայտնաբերվեին ինչպես մահվան պատճառ հանդիսացող հիվանդությունը՝ սրտային պաթոլոգիան, այնպես էլ մյուս հիվանդությունները ... եթե հայտնաբերվեին այդպիսիք, կազմակերպվեր համապատասխան բուժումներ ... ապա հնարավոր էր խուսափել առողջական վիճակի հետագա վատացումից, նաեւ մահվան ելքից»:

36. 2010 թվականի հունիսի 24-ին քննիչը Քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 2-րդ մասով (տե՛ս ստորեւ 57-րդ պարբերությունը) մեղադրանք է առաջադրել այդ ժամանակ Կենտրոնական բժշկական հանձնաժողովի անդամ հանդիսացած՝ թերապեւտ Տ.Գ.-ին: Քննիչի որոշման մեջ մասնավորապես նշվել է, որ Տ.Գ.-ին մեղադրանք է առաջադրվել Ա. Մալխասյանի լիարժեք բժշկական զննությունն ապահովելու համար քայլեր չձեռնարկելու եւ նրան անօրինականորեն զինվորական ծառայությանը պիտանի ճանաչելու համար այն դեպքում, երբ նա պիտանի չի եղել:

37. 2010 թվականի հուլիսի 16-ին քննիչը Քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 1-ին մասով (տե՛ս ստորեւ 59-րդ պարբերությունը) մեղադրանք է առաջադրել Ա.Խ.-ին՝ ծառայության նկատմամբ ծայրահեղ անփույթ վերաբերմունքի համար: Քննիչի որոշման մեջ նշվել է մասնավորապես, որ Ա. Խ.-ն մեղադրվում էր Ա. Մալխասյանի ներկայացրած բժշկական փաստաթղթերում նշված՝ նրա առողջական վիճակի վերաբերյալ տեղեկատվությունը հաշվի չառնելու եւ նրան լրացուցիչ հետազոտությունների չուղարկելու մեջ, ինչի արդյունքում վերջինս, լինելով ծառայության համար ոչ պիտանի,

անօրինականորեն զորակոչվել էր բանակ:

38. 2010 թվականի օգոստոսի 30-ին քննիչը Քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 2-րդ մասով (տե՛ս ստորեւ 57-րդ պարբերությունը) մեղադրանք է առաջադրել այդ ժամանակ Կենտրոնական բժշկական հանձնաժողովի անդամ հանդիսացած՝ նյարդաբան Գ.Հ.-ին: Քննիչի որոշման մեջ նշվել է մասնավորապես, որ Գ.Հ.-ն մեղադրվում էր Ա. Մալխասյանի լիարժեք բժշկական զննությունն ապահովելու համար քայլեր չձեռնարկելու եւ նրան ծառայության համար պիտանի ճանաչելու մեջ, ինչի արդյունքում վերջինս, լինելով ծառայության համար ոչ պիտանի, անօրինականորեն զորակոչվել էր բանակ:

39. 2010 թվականի նոյեմբերի 2-ին քննիչը նշանակել է դատաբժշկական եւ ռազմաբժշկական համալիր փորձաքննություն՝ դա հիմնավորելով նրանով, որ այդ փորձաքննությունը միակ հնարավոր միջոցն էր քննության ժամանակ առաջացած մի շարք անհամապատասխանություններ պարզելու համար:

40. Համալիր դատաբժշկական փորձաքննությունն անցկացնելու նպատակով 2010 թվականի նոյեմբերի 12-ին Առողջապահության նախարարի համապատասխան հրամանի հիման վրա ձեւավորվել է փորձագետների հանձնաժողով:

41. 2011 թվականի սեպտեմբերի 17-ին հանձնաժողովը ներկայացրել է իր եզրակացությունը՝ համաձայն որի՝ 2009 թվականի հուլիսի 4-ին Ա. Մալխասյանի առողջության կտրուկ վատթարացումը եւ դրան հաջորդած մահը, հնարավոր է, կապ ունեին աղեստամոքսային սուր արյունահոսության հետ (Մելորի-Վեյսի համախտանիշ), որը պայմանավորված էր սրտի վրա ազդող թաքնված պաթոլոգիական փոփոխություններով (պսակաձեւ զարկերակների հիվանդություն, կարդիոսկլերոզ) եւ դրա հետեւանքով վերակենդանացման անհրաժեշտ միջոցառումների արդյունքում առաջացած սրտի կանգով եւ ուղեղի այտուցով: Բացի իր աղեստամոքսային խանգարումներից Ա. Մալխասյանը տառապել է պսակաձեւ զարկերակների բորբոքմամբ եւ կարդիոսկլերոզով, որոնք ընթացել են առանց ախտանիշների եւ ֆունկցիոնալ փոփոխությունների, քանի որ

նա դրանց հետ կապված գանգատներ չի ունեցել: Ա. Մալխասյանի լրացուցիչ բուժումը եւ զորակոչը հետաձգելը հնարավոր է կանխեին ճակատագրական ելքը: Նաեւ չի կարելի բացառել, որ այդ ախտաբանական վիճակների հանրագումարը քաղաքացիական կյանքում եւս կարող էր հանգեցնել նույն ելքի:

42. 2014 թվականի հուլիսի 17-ին քննիչը որոշում է կայացրել դադարեցնել Տ. Գ.-ի, Ա.Խ.-ի եւ Գ.Հ.-ի նկատմամբ քրեական հետապնդումը՝ հանցակազմի բացակայության հիմքով, եւ կարճել քրեական գործով վարույթներն այն հիմքով, որ Ա. Մալխասյանի մահն առաջացել է առանց ախտանշանների ընթացող սրտային հիվանդություններից, որոնց ախտանշաններն իրենց զգացնել չեն տվել, բայց որոնք հետագայում կենսակերպի եւ առօրյա կյանքի փոփոխության արդյունքում հանգեցրել են առանց ախտանշանների ընթացող ախտաբանական վիճակների սրմանը եւ արդյունքում՝ սրտային անբավարարության: Նշված հիվանդությունները չեն հայտնաբերվել եւ չէին կարող հայտնաբերվել նույնիսկ նախքան զորակոչը թե՛ այն կլինիկայում, որտեղ Ա. Մալխասյանը նախկինում հետազոտվել էր, թե՛ հետագայում զորակոչի ընթացքում բժիշկների կողմից հետազոտվելիս: Այս կետի մասով քննիչը վկայակոչել է մասնավորապես 2011 թվականի սեպտեմբերի 17-ի փորձագիտական եզրակացությունը:

V. ԴԻՄՈՒՄԱՏՈՒԻ ԲՈՂՈՔՆԵՐԸ

43. Դիմումատուն վիճարկել է քննիչի 2014 թվականի հուլիսի 17-ի որոշումը Զինվորական դատախազին, որը մերժել է նրա բողոքը:

44. 2014 թվականի օգոստոսի 13-ին դիմումատուն պահանջել է քննիչի եւ դատախազի վերոնշյալ որոշումների՝ դատական կարգով վերանայում:

45. 2014 թվականի նոյեմբերի 11-ի որոշմամբ Երեւանի Արաբկիր եւ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատարանը (Վարչական շրջանի

դատարան) մերժել է դիմումատուի բողոքը եւ ամբողջությամբ անփոփոխ թողել նշված որոշումները:

46. Դիմումատուն ներկայացրել է վերաքննիչ բողոք, որը մերժվել է Վերաքննիչ քրեական դատարանի կողմից 2014 թվականի դեկտեմբերի 27-ին:

47. Դիմումատուն վճռաբեկ բողոք է ներկայացրել, որով պահանջել է, որ ստորադաս դատարանների որոշումները բեկանվեն եւ գործն ուղարկվի նոր քննության: Նրա բողոքն ընդունվել է քննության Վճռաբեկ դատարանի կողմից:

48. 2015 թվականի հունիսի 5-ի որոշմամբ Վճռաբեկ դատարանը մասնակիորեն բավարարել է դիմումատուի բողոքը: Այն բեկանել է առաջին ատյանի դատարանի եւ վերաքննիչ դատարանի համապատասխանաբար 2014 թվականի նոյեմբերի 11-ի եւ դեկտեմբերի 27-ի որոշումները եւ նոր որոշում է ընդունել, որով վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցրել է վերացնել դիմումատուի իրավունքների խախտումները, որոնք բխում են նրա որդու մահվան փաստի առթիվ հարուցված քրեական վարույթից: Այդ որոշման համապատասխան մասերն ունեն հետեւյալ բովանդակությունը.

> « ... Անդրադառնալով սույն գործի փաստական հանգամանքներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործի նյութերում առկա են բազմաթիվ տեղեկություններ այն մասին, որ ժամկետային զինծառայող [Ա. Մալխասյանը] տառապել է մի շարք հիվանդություններով ... Մինչդեռ [Ա. Մալխասյանը], հետազոտվելով Արաբկիրի զինկոմիսարիատի բժշկական հանձնաժողովում, Երեբունի բժշկական կենտրոնում, այնուհետեւ նաեւ Կենտրոնական ռազմական բժշկական հանձնաժողովում, զինծառայության համար ճանաչվել է պիտանի ... [եւ] զորակոչվել է ՀՀ զինված ուժեր...
>
> Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ Համալիր փորձաքննության եզրակացության բովանդակությունից [ներկայացվել է 2011 թվականի սեպտեմբերի 17-ին] հետեւում է, որ ծածկընթաց բնույթ են կրել միայն կորոնարոսկլերոզ, կարդիոսկլերոզ ախտաբանական հատկանիշները, ընդ որում, նման եզրահանգումը հիմնավորվել է այն հանգամանքով, որ կենդանության օրոք [Ա.Մալխասյանը] երբեւէ գանգատներ չի ներկայացրել...
>
> Նշված եզրահանգումից չի հետեւում, որ անձի մոտ գանգատների բացակայությունը բացառում է ... համապատասխան հետազոտությունների միջոցով վկայակոչված սրտային

հիվանդությունները բացահայտելու փաստացի հնարավորությունը ...

... Այսպիսով Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քննիչի եզրահանգումն այն մասին, որ [Ա. Մալխասյանի] սրտային հիվանդությունները չէին կարող հայտնաբերվել բժիշկ-մասնագետների կողմից, հիմնավորված չէ ...

Ավելին՝ թվով երկու՝ դատաբժշկական փորձաքննությունների եզրակացությունների առկայության պայմաններում [դիահերձում] եւ [դատաբժշկական փորձագետների հանձնաժողովի կողմից փորձաքննություն] ... քննիչի որոշումից պարզ չէ, թե ինչ տեսակի փորձաքննություն է նշանակվել՝ լրացուցիչ, թե կրկնակի ... վերոնշյալ հանգամանքները կարող են էական կասկածներ հարուցել քննարկվող փորձաքննության եւ դրա արդյունքի ...արժանահավատության կապակցությամբ:

... վարույթն իրականացնող մարմինները պատշաճ գնահատման չեն արժանացրել ... հետեւյալ հանգամանքները.

1) գործի նյութերում առկա մի շարք ապացույցներ ... վկայում են այն մասին, որ Երեբունի ԲԿ-ի բժշկական հանձնաժողովի կողմից կատարված [Ա. Մալխասյանի] հետազոտության արդյունքները լրիվ ծավալով ... չեն արտացոլվել ... Կենտրոնական բժշկական հանձնաժողովին ներկայացված ... ակտի մեջ ... Մասնավորապես՝

- առողջության վիճակի հետազոտման ակտում չի արտացոլվել գաստրոէնտերոլոգի ախտորոշումը՝ «էրոզիվ գաստրիտ, մակերեսային դուոդենիտ, կերակրափողի եւ ստամոքսի հիպերմոտոր դիսկինեզիա, ստոծանու կերակրափողային անցքի ճողվածք», ճիշտ չի ձեւակերպվել նյարդաբանական ախտորոշումը՝ «վեգետաանոթային դիստոնիա կրիզներով»:

... Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործում առկա են բազմաթիվ տվյալներ՝ համաձայն որոնց՝ [Ա. Մալխասյանն] իր մոտ առկա հիվանդությունների հիմքով ենթակա չէր զորակոչման ... Մինչդեռ այդ հիվանդությունները օբյեկտիվ եւ ամբողջական չեն բացահայտվել բժիշկների կողմից եւ (կամ) արտացոլվել Ա.Մալխասյանի առողջական վիճակի մասին ակտում:

...քննիչի կողմից չի պարզվել, թե ինչու չեն կատարվել համապատասխան բժշկական հետազոտությունները, եւ ինչու կատարված հետազոտությունների արդյունքներն օբյեկտիվ եւ ամբողջական չեն արտացոլվել ... առողջական վիճակի վերաբերյալ ակտում ...

... քննիչի կողմից ... համապատասխան իրավական գնահատական չի տրվել [Ա. Ու.-ի] գործողություններին... [Ա. Ու.-ն] ցուցմունք է տվել, որ ինքն է կարգադրել [Ա. Մալխասյանի] անձնական գործից հանել թվով տասը փաստաթղթեր ... Մինչդեռ քննիչը չի պարզել, թե ինչ

նպատակով է Ա.Ու.-ն կարգադրել [Ա. Մալխասյանի] անձնական գործից փաստաթղթեր հանել, այն էլ այնպիսիք, որոնք որոշիչ նշանակություն կարող էին ունենալ նրա՝ զինծառայության համար պիտանի լինելու հարցը որոշելիս: Բացի այդ, քննիչը չի պարզել՝ արդյոք [Ա.Ու-ն] իրավասու էր այդպիսի կարգադրություն անել:

... քննիչը չի պարզել՝ արդյոք Արաբկիրի զինվորական կոմիսարն իր կողմից ուղարկված անձի [իր ներկայացուցիչ Մ.Ս.-ի] միջոցով միջամտել է «Էրեբունի» բժշկական կենտրոնի ... բժիշկների մասնագիտական գործունեությանը ...

... Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով կոպտորեն խախտվել են քննության ողջամիտ ժամկետները...»:

VI. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

49. 2015 թվականի նոյեմբերի 5-ին քրեական վարույթը վերսկսվել է, եւ գործն ուղարկվել է Քննչական կոմիտեի հատկապես կարեւոր գործերի քննության վարչություն՝ լրացուցիչ քննության:

50. Հարցաքննվել են մի շարք վկաներ, այդ թվում՝ Էրեբունի բժշկական կենտրոնի բուժանձնակազմը եւ Ա. Մալխասյանի զորակոչի գործընթացին ներգրավված զինվորական բժշկական հաձնաժողովի անձնակազմը:

51. 2017 թվականի փետրվարի 13-ին քննիչը, համարելով, որ 2011 թվականի սեպտեմբերի 17-ի եզրակացությունը (տես վերեւում 41-րդ պարբերությունը) բավարար չափով հստակ եւ ամբողջական չէ, նշանակել է փորձագետների հանձնաժողով՝ լրացուցիչ համալիր դատաբժշկական եւ ռազմաբժշկական փորձաքննություն անցկացնելու համար: Փորձագիտական հանձնաժողովի կողմից 2017 թվականի մարտի 20-ին տրված եզրակացության համապատասխան մասերն ունեն հետեւյալ բովանդակությունը.

« ...

Հարց. Արդյոք Միքայելյանի անվան հիվանդանոցում տրված ախտորոշումները «Մելորի-Վեյսի համախտանիշ, աղեստամոքսային արյունահոսություն» ... պետք է

արձանագրվեին Էրեբունի բժշկական կենտրոնի վիրաբուժական բաժանմունքի՝ [Ա. Մալխասյանի] առողջական վիճակի վերաբերյալ եզրակացության մեջ ...

Պատասխան. Այո՛:

Հարց. Նշված ախտորոշումներից որը ... կարող էր հանգեցնել սակավարյունության եւ սրտի կանգի...

Պատասխան. Մելորի-Վեյսի համախտանիշը բնութագրվում է աղեստամոքսային արյունահոսությամբ, որը կարող է հանգեցնել սակավարյունության, իսկ վերջինս, այլ պատճառների թվում, կարող էր հանգեցնել սրտամկանի սուր փոփոխությունների եւ պատճառել սրտի կանգ:

Հարց. Նշված ախտորոշումներից որն է մասնավորապես հանգեցրել սրտի կանգի ...

Պատասխան. ... Մելորի-Վեյսի համախտանիշի հետ կապված աղեստամոքսային արյունահոսությունը ... կարող էր պատճառ դառնալ սրտի վնասվածքի:

Հարց. Եթե [Ա. Մալխասյանի]... ախտորոշումն ամբողջապես եւ օբյեկտիվորեն արտացոլված լիներ եզրակացության մեջ, ապա ինչ որոշում կկայացնեին [Կենտրոնական բժշկական հանձնաժողովի] վիրաբույժը եւ նյարդաբանը [2009 թվականի հունիսի 25-ի] նիստի ընթացքում, ... եւ արդյոք [Ա. Մալխասյանը] ծառայության համար պիտանի կհամարվեր:

Պատասխան. ... եթե բոլոր ախտորոշումները ներառված լինեին ... հանձնաժողովների անդամները ... հնարավոր է՝ այլ որոշում կայացնեին ... Այդ դեպքում, հավանաբար, [Կենտրոնական բժշկական հանձնաժողովը] կարող էր հետաձգել [Ա. Մալխասյանի] զորակոչը երեք տարով ...

Հարց. Արդյոք [Կենտրոնական բժշկական հանձնաժողովի] վիրաբույժը սխալ որոշում էր կայացրել ...բժշկական փաստաթղթերը ուսումնասիրելիս [նախկին ախտորոշումների վերաբերյալ]...

Պատասխան. Հաշվի առնելով ...գործի նյութերում ... բժշկական փաստաթղթերի առկայությունը [նախորդ ախտորոշումների վերաբերյալ]՝ [Կենտրոնական բժշկական հանձնաժողովի] վիրաբույժը սխալ որոշում է կայացրել՝ հայտարարելով, որ «Վիրաբուժական որեւէ պաթոլոգիա չի հայտնաբերվել» ...

...

Հարց. Արդյոք կա որեւէ պատճառահետեւանքային կապ Էրեբունի բժշկական կենտրոնի վիրաբուժական բաժանմունքի հանձնաժողովի անդամների եւ [Կենտրոնական բժշկական հանձնաժողովի] բժիշկ-մասնագետների գործողությունների եւ [Ա. Մալխասյանի]

առողջական վիճակի հետագա վատթարացման եւ մահվան միջեւ:

Պատասխան. [Հարցում նշված անձինք] չեն ախտորոշել դիահերձման ժամանակ հայտնաբերված՝ նրա մահվան հետ ուղղակիորեն կապված հիվանդություններն ու պաթոլոգիական վիճակները ... »:

52. 2017 թվականի հուլիսի 19-ի որոշմամբ քննիչը կարճել է քրեական գործով վարույթը: Նա հաստատված է համարել, որ այն բանից հետո, երբ Ա. Մալխասյանին ուղարկել են Էրեբունի բժշկական կենտրոնի վիրաբուժական բաժանմունք՝ բժշկական հետազոտություններ անցնելու համար, զինվորական կոմիսար Ա. Ու.-ն, նման լիազորություն չունենալով, Արաբկիրի զինվորական կոմիսարիատի բժշկական հանձնաժողովի վիրաբույժ Մ. Ս.-ին Ա. Մալխասյանի հետ միասին ուղարկել է այնտեղ՝ նրան կարգադրելով ներկա գտնվել բժշկական հետազոտությանը: Այդ օրը հերթապահող վիրաբույժ Ա. Ս.-ն ստանձնել է Ա. Մալխասյանի բժշկական հետազոտությունն անցկացնելու պարտականությունը եւ որպես հանձնաժողովի անդամ մասնակցել է նրա առողջական վիճակի բժշկական եւ փորձագիտական հետազոտությանը: Հանձնաժողովը նախագահել է Հ. Ս.-ն, իսկ Ա. Ա.-ն՝ վիրաբուժական բաժանմունքի վարիչը, դրա մյուս անդամն է եղել:

2009 թվականի հունիսի 15-ին՝ բժշկական հետազոտության անցկացման առաջին օրը, Ա. Մալխասյանն իր բժշկական փաստաթղթերը, այդ թվում՝ Միքայելյանի անվան հիվանդանոցի տրամադրած ախտորոշումը, ներկայացրել է Ա. Ս.-ին: Մ. Ս.-ն 2009 թվականի հունիսի 15-ից 17-ը ներկա է գտնվել Էրեբունի բժշկական կենտրոնում անցկացված բժշկական հետազոտություններին եւ դրանց արդյունքների մասին հաղորդել է Ա. Ու.-ին: Բժշկական հետազոտություններն ավարտելուց հետո՝ 2009 թվականի հունիսի 19-ին, Ա. Ս.-ն եզրակացություն է ներկայացրել, որն ամբողջությամբ եւ ճշգրտորեն չի արտացոլում արդյունքները: Էրեբունի բժշկական կենտրոնի հանձնաժողովի անդամները, իրենց ծառայության նկատմամբ անփույթ վերաբերմունք ցուցաբերելով, ստորագրել են Ա. Մալխասյանի առողջական վիճակի վերաբերյալ թերի եզրակացություն:

2009 թվականի հունիսի 25-ին եզրակացությունը ներկայացվել է Կենտրոնական բժշկական հանձնաժողով, որում, չնայած գործի նյութերում

Մելորի-Վեյսի համախտանիշը, աղեստամոքսային արյունահոսությունը եւ այլ ախտանիշներ հավաստող բժշկական փաստաթղթերի առկայության, վիրաբույժ Ա. Ուզ.-ը նշել է, որ «Որեւէ վիրաբուժական պաթոլոգիա չի հայտնաբերվել», որից հետո Ա. Մալխասյանը ճանաչվել է զինվորական ծառայության համար պիտանի: 2009 թվականի հունիսի 26-ին՝ այն օրը, երբ Ա. Մալխասյանը պետք է զորակոչվեր բանակ, Ա.Ու.-ն, չունենալով նման լիազորություն, կարգադրել է հանել Ա. Մալխասյանի բժշկական փաստաթղթերը գործի նյութերից եւ նրան ուղարկել զորակոչիկների հավաքագրման կետ առանց այդ փաստաթղթերի: Այնուամենայնիվ, նույն օրը դիմումատուն Զորակոչիկների հավաքագրման կետի բժշկական հանձնաժողովի նախագահ Ա. Խ.-ին տրամադրել է Ա. Մալխասյանի բժշկական փաստաթղթերը: Ա. Խ.-ն այդ ժամանակ հեռախոսազրույց է ունեցել Ա. Ուզ.-ի հետ, որը նշել է, որ բժշկական փաստաթղթերում առկա ախտորոշումները չեն հաստատվել Էրեբունի բժշկական կենտրոնում իրականացված բժշկական հետազոտությունների ժամանակ: Ա.Խ.-ն Կենտրոնական բժշկական հանձնաժողովի որոշումն ընդունել է որպես վերջնական, եւ դրա հիման վրա Ա. Մալխասյանը նույն օրը զորակոչվել է բանակ:

53. Նույն օրը կայացված որոշմամբ քննիչը որոշել է Հ. Ս.-ի, Ա. Ա.-ի, Ա. Ս.-ի եւ Ա. Ուզ.-ի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնել: Որոշման համաձայն հաստատվել է, որ նրանք, իրենց ծառայության նկատմամբ անփույթ վերաբերմունք դրսեւորելով, պատշաճ կերպով չեն կատարել իրենց պարտավորությունը, որի արդյունքում Ա. Մալխասյանը, չնայած զինվորական ծառայության հետ անհամատեղելի հիվանդություններ ունենալուն, զորակոչվել է բանակ, որտեղ նրա հիվանդությունները զարգացել են եւ հաշված օրերի ընթացքում հանգեցրել մահվան: Այսպիսով, Հ. Ս.-ի, Ա. Ա.-ի, Ա. Ս.-ի եւ Ա. Ուզ.-ի գործողությունների համար Քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված է պատիժ (տե՛ս ստորեւ 57-րդ պարբերությունը): Այնուամենայնիվ, նրանց նկատմամբ քրեական հետապնդման վաղեմության ժամկետն անցել է, եւ նրանք չեն առարկել իրենց նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու դեմ:

54. Նույն օրը կայացված մեկ այլ որոշմամբ քննիչը որոշել է Ա. Ու.-ի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնել՝ նրա գործողություններում հանցակազմի բացակայության պատճառով: Համապատասխան որոշման մեջ մասնավորապես նշվել է, որ Ա. Ու.-ն որպես Արաբկիրի զինվորական կոմիսար Մ. Ս.-ին Ա. Մալխասյանի հետ Էրեբունի բժշկական կենտրոն ուղարկելու եւ վերջինիս անձնական գործից փաստաթղթեր հանելու լիազորություն չի ունեցել, եւ որ նման կարգադրություններ տալով՝ նա սահմանազանցել է իր պաշտոնեական լիազորությունները: Այնումենայնիվ, Քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասի կիրառումը (տե՛ս ստորեւ 58-րդ պարբերությունը) պահանջում է, որ տվյալ գործողություններն էական վնաս պատճառած լինեն, եւ պատճառական կապ լինի այդ գործողությունների եւ հասցված վնասի միջեւ: Այնուամենայնիվ, Մ. Ս.-ն չի միջամտել Ա. Մալխասյանի բժշկական հետազոտություններին, եւ Կենտրոնական հավաքագրման կետի բժիշկ-մասնագետները տեղեկացված են եղել Ա. Մալխասյանի նախկին ախտորոշումների մասին, քանի որ դիմումատուն բժշկական հանձնաժողովի նախագահին է փոխանցել համապատասխան փաստաթղթերը: Նման հանգամանքներում Ա. Ու.-ի կողմից իր պաշտոնեական լիազորությունները սահմանազանցելու արդյունքում էական վնաս չի պատճառվել:

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Ա. Քրեական օրենսգիրք

55. Քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվում է, որ դիտավորությամբ կատարված այն արարքները, որոնց համար առավելագույն պատիժը չի գերազանցում հինգ տարի ժամկետով ազատազրկումը, ինչպես նաեւ անզգուշությամբ կատարված այն արարքները, որոնց համար առավելագույն պատիժը չի գերազանցում տասը տարի ժամկետով ազատազրկումը, համարվում են «միջին ծանրության հանցագործություններ»:

56. 75-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանվում է, որ անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե «միջին ծանրության հանցանք» կատարելու պահից անցել է հինգ տարի:

57. 315-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, որ պաշտոնատար անձի կողմից ծառայության նկատմամբ անբարեխիղճ կամ անփույթ վերաբերմունքի հետեւանքով իր պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ կամ այլ ծանր հետեւանքներ, պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով:

58. 375-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվում է, որ պետի կամ պաշտոնատար անձի կողմից իշխանությունը կամ պաշտոնեական դիրքը չարաշահելը, իշխանազանցությունը կամ պաշտոնեական լիազորությունների սահմանն անցնելը, ինչպես նաեւ իշխանության անգործությունը, եթե այդ արարքները կատարվել են շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով, եւ եթե դրանք էական վնաս են պատճառել, պատժվում են ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

59. 376-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ զինվորական պաշտոնատար անձանց անփույթ վերաբերմունքը ծառայության նկատմամբ, որը պատճառել է էական վնաս, պատժվում է առավելագույնը երկու տարի ժամկետով զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ, առավելագույնը երկու տարի ժամկետով կարգապահական գումարտակում պահելով կամ առավելագույնը երեք տարի ժամկետով ազատազրկմամբ: Նույն արարքները, որոնք առաջացրել են ծանր հետեւանքներ, պատժվում են երեքից վեց տարի ժամկետով ազատազրկմամբ (376-րդ հոդվածի 2-րդ մաս):

Բ. Քրեական դատավարության օրենսգիրք

60. Քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ

կետով սահմանվում է, որ եթե համապատասխան վաղեմության ժամկետներն անցել են, ապա քրեական գործ չի կարող հարուցվել, եւ քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման:

61. 35-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվում է, որ քննիչը եւ դատախազը, հայտնաբերելով քրեական գործի վարույթը բացառող հանգամանքներ, քրեական գործով մինչդատական վարույթի յուրաքանչյուր փուլում որոշում են կայացնում քրեական գործի վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին:

62. 35-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանվում է, որ, *inter alia*, ՔԴՕ-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիման վրա գործի վարույթի կարճում եւ քրեական հետապնդման դադարեցում չի թույլատրվում, եթե մեղադրյալն առարկում է դրա դեմ: Այդպիսի դեպքերում քրեական գործի վարույթը շարունակվում է սովորական կարգով:

ԻՐԱՎՈՒՆՔԸ

I. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 2-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

63. Հիմնվելով Կոնվենցիայի 2-րդ եւ 13-րդ հոդվածների վրա՝ դիմումատուն բողոք է ներկայացրել ծառայության ընթացքում իր որդու մահվան առնչությամբ եւ այն մասին, որ իշխանության մարմիններն այդ հարցի մասով արդյունավետ քննություն չեն իրականացրել: Քանի որ Դատարանն է որոշում, թե ինչպիսի իրավական բնութագրեր տա գործի փաստական հանգամանքներին (տե՛ս *Ռոդամիլյան եւ այլք ընդդեմ Խորվաթիայի* [ՄՊ] [Radomilja and Others v. Croatia

[GC]], թիվ 37685/10 եւ 22768/12, §§ 114, 124 եւ 126, 2018 թվականի մարտի 20), այն նպատակահարմար է համարում դիմումատուի բողոքները քննել միայն հիմնվելով Կոնվենցիայի 2-րդ հոդվածի վրա, որի համապատասխան մասն ունի հետեւյալ բովանդակությունը.

«1. Յուրաքանչյուրի կյանքի իրավունքը պաշտպանվում է օրենքով»:

Ա. Կոնվենցիայի 37-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն գանգատը գործերի ցուցակից հանելու մասին Կառավարության պահանջը

64. Կառավարությունը միակողմանի հայտարարություն է ներկայացրել՝ պահանջելով Դատարանից Կոնվենցիայի 37-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն գանգատը հանել գործերի ցուցակից։

Դիմումատուն չի համաձայնել միակողմանի հայտարարության պայմանների հետ:

65. Որոշ հանգամանքներում կարող է նպատակահարմար լինել գանգատը կամ դրա մի մասը հանել գործերի ցուցակից՝ Կոնվենցիայի 37-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պատասխանող Կառավարության կողմից միակողմանի հայտարարության հիման վրա, նույնիսկ եթե դիմումատուն ցանկություն է հայտնում, որ գործի քննությունը շարունակվի։ Կոնկրետ գործով դա տեղին կամ անտեղի լինելու հարցը կախված է այն հանգամանքից, թե արդյոք միակողմանի հայտարարությունը բավարար հիմքեր է տալիս եզրակացնելու, որ Կոնվենցիայով սահմանված մարդու իրավունքների նկատմամբ հարգանքով չի պահանջվում, որ Դատարանը շարունակի գործի քննությունը (հոդված 37, կետ 1՝ *վերջում.* տե՛ս, *inter alia*, *Թահսին Ակարն ընդդեմ Թուրքիայի* (նախնական վիճելի հարց) [ՄՊ] [*Tahsin Acar v. Turkey* (preliminary issue) [GC]], թիվ 26307/95, § 75, ՄԻԵԴ 2003-VI): Այս առումով կարեւոր գործոնները ներառում են բերված բողոքների բնույթը, այն, թե արդյոք բարձրացված հարցերը համադրելի են նախկին գործերով Դատարանի կողմից որոշված հարցերի հետ, նմանատիպ նախկին գործերով Դատարանի կայացրած վճիռների կատարման համատեքստում պատասխանող

Կառավարության կողմից ձեռնարկված ցանկացած միջոցի բնույթը եւ շրջանակը եւ այդ միջոցների ազդեցությունը տվյալ գործի վրա (տե՛ս վերեւում հիշատակված՝ *Թահշին Ակարի գործը*, § 76):

Սույն գանգատով բարձրացվում են Դատարանի կողմից նախկին գործերով դեռեւս չորոշված լուրջ հարցեր, որոնք վերաբերում են զինվորական ծառայությանը տվյալ անձի պիտանի լինելը որոշելու նպատակով զորակոչիկի ֆիզիկական վիճակի գնահատմանը: Հետեւաբար Դատարանը համարում է, որ Կառավարության ներկայացրած միակողմանի հայտարարությունը բավարար հիմքեր չի պարունակում եզրակացնելու, որ Կոնվենցիայով սահմանված՝ մարդու իրավունքների նկատմամբ հարգանքով չի պահանջվում, որ Դատարանը շարունակի գործի քննությունը (հոդված 37, կետ 1՝ *վերջում*): Ուստի Դատարանը մերժում է գանգատը գործերի ցուցակից հանելու մասին Կառավարության պահանջը եւ համապատասխանաբար անցնում է գործի ընդունելիության հարցի եւ ըստ էության քննությանը:

Բ. Ընդունելիությունը

1. Վեցամսյա ժամկետի պահպանումը

66. Կառավարությունը պնդել է, որ Կոնվենցիայի 2-րդ հոդվածի նյութաիրավական հայեցակետի շրջանակներում դիմումատուի բողոքի հետ կապված վեցամսյա ժամկետը պետք է հաշվարկվի 2009 թվականի օգոստոսի 26-ից՝ Պաշտպանության նախարարի հրամանի կայացման օրվանից, որով Ա. Մալխասյանի զորակոչի գործընթացում ներգրավված անձանց նկատողություն է տրվել եւ ընթացակարգում մի շարք թերություններ են հայտնաբերվել (տե՛ս վերեւում 31-րդ պարբերությունը): Նրանք պնդել են, որ քրեական վարույթով, որը դեռեւս շարունակվել է Պաշտպանության նախարարի կողմից հրամանի արձակման պահին, չէին կարող նոր փաստեր հայտնաբերվել պետության կողմից

Ա. Մալխասյանի կյանքը չպաշտպանելու առնչությամբ: 2009 թվականի օգոստոսի 26-ի հրամանով ներպետական իշխանություններն ընդունել էին նրա կյանքի իրավունքի խախտումը դրա նյութաիրավական կողմով:

67. Դիմումատուն պնդել է, որ Պաշտպանության նախարարի 2009 թվականի օգոստոսի 26-ի հրամանը (տե՛ս վերեւում 31-րդ պարբերությունը) վարչական որոշում էր, որով չէր ընդունվել Ա. Մալխասյանի կյանքի իրավունքի խախտումը: Այն ընդամենը նպատակ էր ունեցել նկատողություն տալու ծառայության համապատասխան ներքին կանոնակարգերը խախտած անձանց:

68. Վեցամսյա ժամկետը, որպես կանոն, սկսվում է իրավական պաշտպանության ներպետական միջոցները սպառելու գործընթացում վերջնական որոշումը կայացվելու օրվանից: Եթե ի սկզբանե պարզ է, սակայն, որ հասանելի չէ իրավական պաշտպանության որեւէ արդյունավետ միջոց, ապա ժամկետն սկսվում է այն ակտերի կայացման կամ միջոցների ձեռնարկման ամսաթվից, որոնց վերաբերյալ բողոք է ներկայացվում, կամ այդ ակտի կամ դիմումատուի վրա դրա ազդեցության կամ կանխակալ վերաբերմունքի մասին հայտնի դառնալու ամսաթվից, իսկ եթե իրավիճակը շարունակական է, ապա այն ավարտվելու պահից (տե՛ս, ի թիվս այլ վճիռների, *Մոկանուն եւ այլք ընդդեմ Ռումինիայի* [ՄՊ] [*Mocanu and Others v. Romania* [GC]], թիվ 10865/09 եւ 2 այլ, § 259, ՄԻԵԴ 2014 (քաղվածքներ)):

69. Կառավարությունը պնդել է, որ զինվորական ծառայության ընթացքում Ա. Մալխասյանի կյանքը պետության կողմից ենթադրաբար չպաշտպանելու մասին դիմումատուի բողոքը ներկայացվել է վեցամսյա ժամկետը լրանալուց հետո, որը Կառավարության պնդմամբ պետք է հաշվարկվի 2009 թվականի օգոստոսի 26-ից (տե՛ս վերեւում 66-րդ պարբերությունը):

70. Դատարանն ի սկզբանե նշում է, որ իրեն չի տրամադրվել Պաշտպանության նախարարության կողմից իրականացված ներքին քննությանն առնչվող որեւէ տեղեկություն կամ փաստաթուղթ: Ուստի նրան հասանելի չի եղել ներքին քննությանն առնչվող որեւէ նյութ, այդ թվում՝ ամսաթվերը, տեւողությունը,

քննությունը նշանակած կամ այն իրականացրած պաշտոնյաների անուններն ու պաշտոնները: Ամեն դեպքում պարզ է, որ Պաշտպանության նախարարության կողմից իրականացված ներքին քննությունը զուտ ներքին քննություն է եղել, եւ որ դիմումատուն ոչ միայն տեղյակ չի եղել դրա մասին, այլեւ նրան չէին տրամադրվել դրա նյութերը Պաշտպանության նախարարի կողմից 2009 թվականի օգոստոսի 26-ի հրամանն ընդունելու պահին կամ այդ ժամանակահատվածում: Նաեւ այդ հրամանի բովանդակությունից պարզ է դառնում, որ այն ընդամենը կարգապահական բնույթ է կրել եւ վերաբերել է կոնկրետ պաշտոնյաների, որոնք նկատողություն են ստացել դրանով հայտնաբերված՝ ծառայության ներքին կանոնակարգերի որոշակի խախտումների համար, եւ որեւէ կերպ չի անդրադարձել իշխանությունների կամ Պաշտպանության նախարարության պատասխանատվության հարցին, մասնավորապես՝ Ա. Մալխասյանի կյանքը չպաշտպանելու համար:

71. Այս համատեքստում Դատարանը գտնում է, որ Պաշտպանության նախարարի 2009 թվականի օգոստոսի 26-ի հրամանը չի կարող համարվել «վերջնական որոշում» Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով: Հետեւաբար չի կարելի ասել, որ դիմումատուն, այդ հրամանի արձակումից հետո վեցամսյա ժամկետում Կոնվենցիայի 2-րդ հոդվածի նյութաիրավական հայեցակետի շրջանակներում իր բողոքը Դատարանը չներկայացնելով, չի պահպանել վեցամսյա ժամկետի կանոնը: Դատարանը նշում է, որ դիմումատուն սույն գանգատը Դատարան է ներկայացրել 2014 թվականի հուլիսի 23-ին, մինչ նրա որդու մահվան փաստի առթիվ հարուցված քրեական վարույթը ընթացքի մեջ է եղել: Հետեւաբար պետք է մերժել վեցամսյա ժամկետի կանոնը չպահպանելու վերաբերյալ Կառավարության առարկությունը:

2. Իրավական պաշտպանության ներպետական միջոցները չսպառելը

72. Կառավարությունը պնդել է, որ դիմումատուն չի սպառել իրավական պաշտպանության ներպետական միջոցները, որոնք նրան հասանելի են եղել

Կոնվենցիայի 2–րդ հոդվածի ընթացակարգային հայեցակետի շրջանակներում իր բողոքի առնչությամբ: Նրանք նշել են, որ նա չի օգտվել Վճռաբեկ դատարանի 2015 թվականի հունիսի 5-ի որոշման հիման վրա պետությունից ոչ նյութական վնասի փոխհատուցում պահանջելու հնարավորությունից (տե՛ս վերեւում 48-րդ պարբերությունը): Այդ դատարանը բացահայտորեն ընդունել է, որ քննության ժամկետների մասով պահանջը չի կատարվել տվյալ գործով, ինչը դիմումատուին այդ ժամանակ արդեն գործող՝ Քաղաքացիական օրենսգրքի 162.1 եւ 1087.2 հոդվածների հիման վրա ոչ նյութական վնասի փոխհատուցման պահանջ ներկայացնելու հնարավորություն է տվել (Քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթների հակիրճ բովանդակության համար տե՛ս *Նանա Մուրադյանն ընդդեմ Հայաստանի* [*Nana Muradyan v. Armenia*] գործը, թիվ 69517/11, §§ 78-83, 2022 թվականի ապրիլի 5):

73. Կառավարությունն այնուհետեւ պնդել է, որ դիմումատուն բողոք չի ներկայացրել 2017 թվականի հուլիսի 19-ի քննիչի որոշումների դեմ (տե՛ս վերեւում 52-րդ, 53-րդ եւ 54-րդ պարբերությունները): Նրանք նշել են, որ դիմումատուն պետք է առնվազն բողոք ներկայացրած լիներ Ա.Ու.-ի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշման դեմ (տե՛ս վերեւում 54-րդ պարբերությունը):

74. Դիմումատուն նշել է, որ Վճռաբեկ դատարանի 2015 թվականի հունիսի 5-ի որոշումը (տե՛ս վերեւում 48-րդ պարբերությունը) սոսկ քննություն իրականացնող մարմնին պարտավորեցրել է վերացնել դրա կողմից հայտնաբերված ընթացակարգային խախտումները: Ավելին, այդ որոշումն ընդունելուց հետո քննությունը վերսկսվել է արդեն 2015 թվականի նոյեմբերի 5-ին: Ամեն դեպքում քննության վերսկսումը եւ դրան հաջորդած քննչական միջոցառումներն անիմաստ են եղել՝ հաշվի առնելով այն, որ քննությունը վերսկսելու պահին նշված հանցագործությունների վաղեմության ժամկետն անցած է եղել: Նման հանգամանքներում դիմումատուն իմաստ չի տեսել 2017 թվականի հուլիսի 19-ի որոշումների դեմ բողոքներ ներկայացնելու մեջ:

75. Կոնվենցիայի 35-րդ հոդվածի համաձայն իրավական պաշտպանության ներպետական միջոցները սպառելու վերաբերյալ ընդհանուր սկզբունքներն

ամփոփված են *Վուչկովիչը եւ այլք ընդդեմ Սերբիայի* [Vučković and Others v. Serbia] ((նախնական առարկություն) [ՄՊ] [(preliminary objection) [GC]], թիվ 17153/11 եւ 29 այլ, § 69-77, 2014 թվականի մարտի 25) գործում:

76. Կառավարությունը պնդել է, որ դիմումատուն Վճռաբեկ դատարանի 2015 թվականի հունիսի 5-ի որոշման հիման վրա ոչ նյութական վնասի փոխհատուցման համար քաղաքացիական հայց չի ներկայացրել, ինչը նրանց ներկայացմամբ Կոնվենցիայով երաշխավորված նրա հիմնարար իրավունքների խախտման դատական հաստատումն է եւ թույլ է տալիս նրան պետությունից վնասների հատուցում պահանջել (տե՛ս վերեւում 72-րդ պարբերությունը):

77. Դատարանը նշում է, որ այն արդեն քննության է առել եւ մերժել է իրավական պաշտպանության միջոցները չսպառելու վերաբերյալ նմանատիպ առարկություն՝ զինվորական ծառայության ընթացքում զորակոչիկի մահվան վերաբերյալ Հայաստանի դեմ ներկայացված մեկ այլ գործով (տե՛ս վերեւում հիշատակված՝ *Նանա Մուրադյանի* գործը, §§ 107-111): Քանի որ Կառավարությունը որեւէ նոր փաստարկ չի ներկայացրել, Դատարանը չի տեսնում իր կողմից ավելի վաղ արված եզրահանգումներից սույն գործում շեղվելու պատճառներ: Այն հետեւաբար մերժում է չսպառելու վերաբերյալ առաջին առարկությունը (տե՛ս վերեւում 72-րդ պարբերությունը):

78. Կառավարությունը նաեւ նշել է, որ դիմումատուն բողոք չի ներկայացրել 2017 թվականի հուլիսի 19-ի քննիչի որոշումների դեմ:

79. Դատարանն ի սկզբանե նշում է, որ դիմումատուն իր գանգատը ներկայացրել է Դատարան՝ *inter alia* բողոքելով 2014 թվականի հուլիսի 23-ի քննության անարդյունավետությունից, այսինքն՝ մինչեւ 2015 թվականի նոյեմբերին քննությունը վերսկսվելը (տե՛ս վերեւում 49-րդ պարբերությունը):

80. Այն նաեւ նկատում է, որ 2017 թվականի հուլիսի 19-ին քննիչը երեք որոշում է կայացրել: Մասնավորապես նա որոշել է Հ.Ս.-ի, Ա.Ա.-ի, Ա.Ս.-ի եւ Ա.Ուզ.-ի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնել, քանի որ Քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 2-րդ մասի (տե՛ս վերեւում 57-րդ պարբերությունը)

հիման վրա նրանց նկատմամբ քրեական հետապնդման վաղեմության ժամկետն անցել էր (տե՛ս վերեւում 53-րդ պարբերությունը), եւ հետո նույն օրը կայացված մեկ այլ որոշմամբ նա որոշել էր Ա.Ու.-ի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնել այն հիմքով, որ Քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասով (տե՛ս վերեւում 58-րդ պարբերությունը) սահմանված հանցագործության բաղկացուցիչ տարրերն ապացուցված չէին (տե՛ս վերեւում 54-րդ պարբերությունը): Վերջապես, նույն օրը կայացված մեկ այլ որոշմամբ եւ հողում կատարելով քրեական հետապնդում չիրականացնելու մասին նշված երկու որոշումներին՝ քննիչը որոշել էր կարճել քրեական գործով վարույթը (տե՛ս վերեւում 52-րդ պարբերությունը):

81. Դիմումատուն պնդել է, որ 2017 թվականի հուլիսի 19-ի որոշումների դեմ բողոք ներկայացնելն արդյունավետ չէր լինի (տե՛ս վերեւում 74-րդ պարբերությունը):

82. Դատարանը նշում է, որ ընդհանուր առմամբ քրեական հետապնդում չիրականացնելու կամ քննությունը դադարեցնելու մասին որոշման բողոքարկումն իրավական պաշտպանության արդյունավետ միջոց է Հայաստանի իրավական համակարգում (տե՛ս, օրինակ, Գուլյանն ընդդեմ Հայաստանի [*Gulyan v. Armenia*] գործը, թիվ 11244/12, §§ 54 եւ 60, 2018 թվականի սեպտեմբերի 20, որում դատարանները նույն քրեական վարույթի ընթացքում երկու անգամ բեկանել են քննությունը դադարեցնելու մասին որոշումները): Անշուշտ, դիմումատուին հաջողվել է բողոքարկել 2014 թվականի հուլիսի 17-ի որոշումը, որով քրեական վարույթը կարճվել էր առաջին անգամ (տե՛ս վերեւում 42-րդ, 44-րդ եւ 48-րդ պարբերությունները):

83. Այնուամենայնիվ, այն հանգամանքներում, երբ Ա. Մալխասյանի մահվանից ավելի քան վեց տարի անց քննությունը վերսկսվելուց հետո քննիչը որոշում էր կայացրել Հ. Ս.-ի, Ա. Ա.-ի, Ա. Ս.-ի եւ Ա. Ուզ.-ի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու մասին Քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 2-րդ մասով նրանց քրեական պատասխանատվության համար հինգ տարվա

վաղեմության ժամկետի պատճառով (տե՛ս վերեւում 57-րդ պարբերությունը), պարզ չէ, թե հաջողության ինչ ողջամիտ հեռանկարներ կարող էր ունենալ դիմումատուն, եթե ընտրեր բողոքարկումը: Դատարանն այս կապակցությամբ նշում է, որ քրեական դատավարության օրենսդրության համաձայն՝ այդ անձանց նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու միակ հնարավորությունը կստեղծվեր այն դեպքում, երբ նրանք անձամբ առարկեին վաղեմության ժամկետի կիրառման դեմ (տե՛ս վերեւում 60-րդ եւ 62-րդ պարբերությունները): Այնուամենայնիվ, սույն գործով նման առարկություն չի ներկայացվել (տե՛ս վերեւում 53-րդ պարբերությունը): Բացի այդ, Կառավարությունը, քանի որ պնդել է, որ դիմումատուն առնվազն պետք է բողոքարկեր Ա. Ու.-ի վերաբերյալ որոշման դեմ, թվում է, թե ընդունել է, որ Հ. Ս.-ի, Ա. Ա.-ի, Ա. Ս.-ի եւ Ա. Ուզ.-ի մասով համապատասխան որոշումները բողոքարկելը դիմումատուին չէր ընձեռի հաջողության հասնելու ողջամիտ հեռանկար (տե՛ս վերեւում 73-րդ պարբերությունը):

84. Իրավիճակը տարբեր է Ա. Ու.-ի վերաբերյալ որոշման առումով, քանի որ նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել էր այն պատճառով, որ քննիչը եզրակացրել էր, որ Քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասով (տե՛ս վերեւում 58-րդ պարբերությունը) նախատեսված հանցագործությունների բաղկացուցիչ տարրերը չեն ապացուցվել (տե՛ս վերեւում 54-րդ պարբերությունը): Մասնավորապես համարվել է, որ թեեւ Ա. Ու.-ն սահմանազանցել է իր պաշտոնական լիազորությունները՝ իր ենթակային՝ Մ.Ս.-ին Ա. Մալխասյանի հետ ուղարկելով Էրեբունի բժշկական կենտրոն եւ նրա անձնական գործից փաստաթղթեր հանելով, այդ գործողություններն էական վնաս չեն պատճառել: Այս հանգամանքներում եւ ինչպես ենթադրում է Կառավարությունը, ոչինչ չի վկայել այն մասին, որ դիմումատուն չէր կարող բողոքարկել Ա.Ու.-ի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու մասին համապատասխան որոշումը, այնպես ինչպես բողոքարկել էր Տ.Գ.-ի, Ա.Խ.-ի եւ Գ. Հ.-ի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումները (տե՛ս վերեւում 42-րդ եւ 44-րդ

պարբերությունները)։ Ասվածը հաշվի առնելով՝ Դատարանը նշում է, որ այդ պահին Քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասով (տե՛ս վերեւում 58-րդ պարբերությունը) սահմանված՝ հինգ տարի վաղեմության ժամկետով միջին ծանրության հանցագործության համար Ա.Ու.-ի նկատմամբ քրեական հետապնդման վաղեմության ժամկետը նույն կերպ անցել էր (տե՛ս վերեւում 55-րդ եւ 56-րդ պարբերությունները)։ Ամեն դեպքում եւ նույնիսկ առանց Դատարանի կողմից ենթադրություններ անելու, թե արդյոք Ա. Ու.-ն կառարկեր կամ չէր առարկի վաղեմության ժամկետը լրացած լինելու հիմքով վարույթը կարճելուն, եթե դիմումատուի բողոքը բավարարվեր, չի կարելի համարել, որ դիմումատուն, Ա. Ու.-ի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշման դեմ չբողոքարկելով, չի օգտվել իրավական պաշտպանության իրեն հասանելի ներպետական միջոցներից՝ վիճարկելու համար ամբողջ քննության արդյունքները։

85. Համապատասխանաբար եւ սույն գործի հանգամանքներում Դատարանը չի համարում, որ 2017 թվականի հուլիսի 19-ի որոշումների դեմ բողոքներ չներկայացնելով (տե՛ս վերեւում 52-րդ, 53-րդ եւ 54-րդ պարբերությունները), դիմումատուն չի սպառել իրավական պաշտպանության ներպետական միջոցները։ Հետեւաբար Դատարանը մերժում է Կառավարության առարկությունն այս մասով։

3. Անընդունելիության այլ հիմքեր

86. Դատարանը նշում է, որ սույն բողոքը ո՛չ ակնհայտորեն անհիմն է, ո՛չ էլ անընդունելի է Կոնվենցիայի 35-րդ հոդվածում նշված որեւէ այլ հիմքով։ Հետեւաբար այն պետք է հայտարարվի ընդունելի։

Գ. Ըստ էության քննությունը

1. Կողմերի փաստարկները

87. Դիմումատուն պնդել է, որ իր որդու մահվան համար պատասխանատու են իշխանության մարմինները, քանի որ ինչպես հստակ նշվել է քննության ընթացքում, նրա զորակոչին մասնակցած համապատասխան պաշտոնատար անձինք եւ բժիշկ-մասնագետները պատշաճ կերպով չեն գնահատել նրա առողջական վիճակը եւ ճշգրիտ եզրակացություն չեն արել զինվորական ծառայությանը նրա պիտանի լինելու վերաբերյալ: Իշխանության մարմիններն այդ ժամանակ չեն կատարել հարցի արդյունավետ եւ արագ քննություն: Արդյունքում օրենքով մեղավոր ճանաչված անձինք պատասխանատվության չեն ենթարկվել, քանի որ նրանց վերագրված հանցագործությունների վաղեմության ժամկետներն անցել են հենց քննության անհիմն ձգձգումների եւ անարդյունավետության պատճառով: Ինչ վերաբերում է մասնավորապես Ա. Ու.-ին, ապա դիմումատուն պնդել է, որ քննությամբ շարունակաբար պատշաճ իրավական գնահատական չի տրվել վատառողջ զորակոչիկին բանակ զորակոչելուն ուղղված՝ վերջինիս գործողություններին:

88. Կառավարությունը դիմումատուի բողոքի ըստ էության քննության վերաբերյալ որեւէ հայտարարություն չի արել:

2. Դատարանի գնահատականը

ա) Ընդհանուր սկզբունքները

89. Դատարանը վերահաստատում է, որ 2-րդ հոդվածը, որով պաշտպանվում է կյանքի իրավունքը, Կոնվենցիայի ամենահիմնարար դրույթներից մեկն է: 3-րդ հոդվածի հետ միասին այն նաեւ սահմանում է Եվրոպայի խորհրդի ժողովրդավարական հասարակությունների ամենահիմնարար արժեքներից մեկը: Որպես անհատների իրավունքների պաշտպանության գործիք՝ Կոնվենցիայի առարկայով եւ նպատակով պահանջվում է, որ 2-րդ հոդվածը մեկնաբանվի եւ կիրառվի այնպես, որ ապահովվի վերջինիս երաշխիքների կիրառելիությունը եւ արդյունավետությունը (տե՛ս, ի թիվս այլ վճիռների, *McKքանը եւ այլք ընդդեմ Միացյալ Թագավորության* [*McCann and Others v. the United Kingdom*], 1995 թվականի սեպտեմբերի 27, §§ 146-147, շարք Ա, թիվ 324):

90. 2-րդ հոդվածի 1-ին կետի առաջին նախադասությունով պետություններին հորդորվում է ոչ միայն ձեռնպահ մնալ դիտավորությամբ կամ անօրինական ճանապարհով կյանքը խլելուց, այլ նաեւ ձեռնարկել համապատասխան միջոցառումներ իր իրավազորության ներքո անձանց կյանքը երաշխավորելու ուղղությամբ (տե՛ս *Լ.Ս.Բ.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության* [*L.C.B. v. the United Kingdom*], 1998 թվականի հունիսի 9, § 36, *Վճիռների եւ որոշումների մասին զեկույցներ*, 1998 III):

91. Անհատների՝ պարտադիր զինվորական ծառայություն անցնելու համատեքստում Դատարանը նախկինում առիթ է ունեցել ընդգծելու, որ ինչպես արգելանքի տակ պահվող անձանց դեպքում, զորակոչիկները նույնպես գտնվում են պետության իշխանությունների բացառիկ հսկողության ներքո, քանի որ բանակում տեղի ունեցող ցանկացած դեպք ամբողջությամբ կամ մեծամասամբ կատարվում է իշխանությունների բացառիկ իմացությամբ, եւ որ իշխանությունների վրա դրված է նրանց պաշտպանելու պարտականություն (տե՛ս *Բեկերն ընդդեմ Թուրքիայի* [*Beker v. Turkey*], թիվ 27866/03, §§ 41-42, 2009 թվականի մարտի 24, *Մոսենձն ընդդեմ Ուկրաինայի* [*Mosendz v. Ukraine]*, թիվ 52013/08, § 92, 2013 թվականի հունվարի 17 եւ *Մալիկ Բաբայեւն ընդդեմ Ադրբեջանի* [*Malik Babayev v. Azerbaijan*], թիվ 30500/11, §§ 66, 2017 թվականի հունիսի 1):

92. Նույն համատեքստում Դատարանն այնուհետեւ վճռել է, որ պետության առաջնային պարտականությունն է ներդնել կյանքին կամ ֆիզիկական անձեռնմխելիությանը սպառնացող այն վտանգի աստիճանին հարմարեցված կանոններ, որը կարող է առաջանալ ոչ միայն ռազմական գործողությունների եւ օպերացիաների բնույթից, այլեւ մարդկային գործոնից, որն առաջ է գալիս այն ժամանակ, երբ պետությունը որոշում է սովորական քաղաքացիներին զորակոչել զինվորական ծառայություն իրականացնելու համար: Այդպիսի կանոններով պետք է պահանջվի ընդունել գործնական միջոցներ, որոնք ուղղված են զորակոչիկներին զինվորական կյանքին ներհատուկ վտանգներից արդյունավետորեն պաշտպանելուն, եւ պատշաճ ընթացակարգեր՝ այն թերությունները եւ սխալները հայտնաբերելու համար, որոնք այդ առնչությամբ կարող են կատարվել տարբեր

մակարդակներում պատասխանատուների կողմից (տե՛ս *Կիլինչը եւ այլք ընդդեմ Թուրքիայի* [*Kılınç and Others v. Turkey*], թիվ 40145/98, § 41, 2005 թվականի հունիսի 7 եւ վերեւում հիշատակված՝ *Մոսենձի* գործը, § 91):

93. Դատարանն այնուհետեւ վերահաստատում է, որ Կոնվենցիայի 2-րդ հոդվածով կյանքի իրավունքը պաշտպանելու պարտավորությամբ, որը պետք է դիտարկվի 1-ին հոդվածով նախատեսված՝ պետությունների՝ «իրենց իրավազորության ներքո գտնվող յուրաքանչյուրի համար Կոնվենցիայով սահմանված իրավունքներն ու ազատություններն ապահովելու» ընդհանուր պարտականության հետ միասին, անուղղակիորեն պահանջվում է արդյունավետ պաշտոնական քննության անցկացում այն դեպքում, երբ անձինք սպանվել են ուժի գործադրման հետեւանքով՝ պետության պաշտոնատար անձանց կամ մասնավոր անձանց կողմից (տե՛ս, ի թիվս այլ վճիռների, *Մուսթաֆա Թունքը եւ Ֆեսիր Թունքն ընդդեմ Թուրքիայի [ՄՊ] [Mustafa Tunç and Fecire Tunç v. Turkey [GC]], թիվ 24014/05, §§ 169 եւ 171, 2015 թվականի ապրիլի 14*): Այդպիսի քննության հիմնական նպատակը ներպետական իրավունքի այնպիսի արդյունավետ իրականացման ապահովումն է, որով պաշտպանվում է կյանքի իրավունքը: Նույն ստանդարտները նաեւ կիրառվում են պարտադիր զինվորական ծառայության ընթացքում մահվան ելքով պատահարների քննության նկատմամբ (տե՛ս վերեւում հիշատակված՝ *Մալիկ Բաբաեւի* գործը, § 79 եւ դրանում մեջբերված գործերը):

94. Քննությունը պետք է արդյունավետ լինի այն առումով, որ հանգեցնի փաստերի հաստատմանը եւ անհրաժեշտության դեպքում՝ պատասխանատուների հայտնաբերմանն ու պատժելուն (տե՛ս վերեւում հիշատակված՝ *Մուսթաֆա Թունջի եւ Ֆեջիրե Թունջի* գործը, § 172): Այն նաեւ պետք է մանրակրկիտ լինի, ինչը նշանակում է, որ իշխանությունները պետք է լրջորեն փորձեն պարզել տեղի ունեցածը եւ չպետք է հիմնվեն հապճեպ կամ անհիմն եզրակացությունների վրա՝ քննությունն ավարտելու կամ դրանք իրենց որոշումների համար որպես հիմք ընդունելու համար (տե՛ս վերեւում հիշատակված՝ *Մոկանուն եւ այլք* գործը, § 325 եւ *Էլ Մասրին ընդդեմ Մակեդոնիայի նախկին Հարավսլավական Հանրապետության* [ՄՊ] [*El-Masri v. the former Yugoslav Republic of Macedonia* [GC]]

գործը, թիվ 39630/09, § 183, ՄԻԵԴ 2012 թվական):

95. Կոնվենցիայի 2-րդ հոդվածի իմաստով արդյունավետ քննության համատեքստում ենթադրվում է անհապաղ եւ ողջամիտ ժամկետում գործելու պահանջ: Ներպետական իրավունքով նախատեսված պաշտպանության մեխանիզմը պետք է գործնականում գործի ողջամիտ ժամկետում այնպես, որ ապահովվի իրենց ներկայացված կոնկրետ գործերի էության վերաբերյալ քննությունն ավարտին հասցնելը (տե՛ս *Տալպիսն ընդդեմ Իտալիայի* [*Talpis v. Italy*], թիվ 41237/14, § 106, 2017 թվականի մարտի 2):

բ) Այդ սկզբունքների կիրառումը սույն գործի նկատմամբ

i) Նյութաիրավական հայեցակետը

96. Դատարանը նշում է, որ ներպետական մակարդակով, ներքին քննության եւ քրեական վարույթի իրականացման արդյունքում միանշանակ կերպով հաստատվել է, որ Ա. Մալխասյանը բանակ էր զորակոչվել չնայած բժշկական ախտորոշումներին, որոնց առկայության պարագայում նա զինվորական ծառայության համար պիտանի չէր, եւ որոնց մասին նրա զորակոչի պահին տեղյակ են եղել զինվորական իշխանությունները (տե՛ս վերեւում 31-րդ, 52-րդ, 53-րդ եւ 54-րդ պարբերությունները):

97. 2009 թվականի հունիսի 25-ին Ա. Մալխասյանը զինվորական ծառայության համար պիտանի է համարվել եւ հաջորդ օրը զորակոչվել է (տե՛ս վերեւում 6-րդ եւ 21-րդ պարբերությունները): Նա մահացել է ծառայությունն սկսելուց ընդամենը տասն օր հետո (տե՛ս վերեւում 8-րդ պարբերությունը):

98. Գործի նյութերում առկա փաստաթղթերի համաձայն՝ Ա. Մալխասյանը դեռեւս 2009 թվականի մարտին կամ ապրիլին Արաբկիրի զինվորական կոմիսարիատ էր ներկայացրել իր հիվանդության պատմության վերաբերյալ բժշկական փաստաթղթերը, այդ թվում՝ 2008 թվականի հուլիսին եւ դեկտեմբերին արված բժշկական եզրակացությունները (տե՛ս վերեւում 9-րդ, 10-րդ եւ 11-13-րդ

պարբերությունները): Չնայած դրան, Արաբկիրի զինվորական կոմիսար Ա. Ու.-ն ոչ միայն չէր ուղարկել նրան հետազոտության նրա առողջական վիճակը ստուգելու համար, այլեւ մերժել էր նրա դիմումները, իսկ հետո նաեւ դիմումատուի եւ՝ բանավոր, եւ՝ գրավոր դիմումները՝ նրան բժշկական հետազոտությունների ուղարկելու վերաբերյալ (տե՛ս վերեւում 13-15-րդ պարբերությունները): Ավելին, չնայած ի վերջո եւ դիմումատուի՝ ըստ աստիճանակարգի ներկայացված բողոքների արդյունքում Ա. Ու.-ի վերադասը վերջինիս կարգադրել է Ա. Մալխասյանին ուղարկել բժշկական հետազոտությունների, նա, չարաշահելով իր պաշտոնեական լիազորությունները, միջամտել է Ա. Մալխասյանի առողջական վիճակի ի սկզբանե օբյեկտիվ գնահատմանը՝ Էրեբունի բժշկական կենտրոն ուղարկելով իր ենթակայության ներքո գործող բժիշկներից մեկին, որը ներկա էր գտնվելու համապատասխան հետազոտություններին եւ զեկուցելու էր նրան արդյունքների մասին (տե՛ս վերեւում 18-րդ, 33-րդ եւ 54-րդ պարբերությունները):

99. Էրեբունի բժշկական կենտրոնում Ա. Մալխասյանի բժշկական հետազոտություններն ավարտվելուց հետո համապատասխան փորձագիտական հանձնաժողովը, այդ թվում՝ վիրաբույժներ Հ.Ս.-ն, Ա.Ա.-ն եւ Ա.Ս.-ն ներկայացրել են իրենց եզրակացությունը՝ նրա մոտ ախտորոշելով «հոգեբանական սթրեսով պայմանավորված ստամոքսաղիքային մոտորիկայի խանգարումներ» (տե՛ս վերեւում 20-րդ պարբերությունը): Այդ եզրակացության մեջ, որը քննություն իրականացնող մարմնի կողմից համարվել է «թերի» (տե՛ս վերեւում մասնավորապես 52-րդ պարբերությունը), արտացոլված չէին ո՛չ Ա. Մալխասյանի նախորդ ախտորոշումները, այդ թվում՝ Մելորի-Վեյսի համախտանիշը (տե՛ս վերեւում 9-րդ պարբերությունը), ո՛չ էլ նույնիսկ տվյալ եռօրյա հետազոտության ընթացքում նույն հիվանդանոցի աղեստամոքսաբանի եւ նյարդաբանի կողմից նրա հետազոտությունների արդյունքները (տե՛ս վերեւում 19-րդ պարբերությունը):

100. Կենտրոնական բժշկական հանձնաժովն իր հերթին, հիմնվելով այդ «թերի» եզրակացության վրա, Ա. Մալխասյանին զինվորական ծառայության համար պիտանի է համարել, չնայած նրա անձնական գործում նրա հիվանդության պատմության մասին վկայող բժշկական փաստաթղթերի առկայության, այդ թվում՝

Մելորի-Վեյսի համախտանիշի ախտորոշման եւ աղեստամոքսային արյունահոսության, որը հետագայում փորձագետների հանձնաժողովի կողմից համարվել էր նրա մահվանը հանգեցրած սրտի կանգի հնարավոր պատճառը (տե՛ս վերեւում 51-րդ պարբերությունը): Մասնավորապես, չնայած հասանելի բժշկական ապացույցների առկայությանը, Ա. Ուզ.-ը՝ Կենտրոնական բժշկական հանձնաժողովի անդամ հանդիսացող վիրաբույժը, նշել է, որ Ա. Մալխասյանը վիրաբուժական պաթոլոգիա չունի (տե՛ս վերեւում 52-րդ պարբերությունը):

101. Հետագայում, Ա. Ու.-ն կարգադրել է, որ Ա. Մալխասյանի գործից հանվեն բժշկական փաստաթղթեր, այդ թվում՝ նրա նախորդ ախտորոշումները պարունակող փաստաթղթերը, այդպիսով փորձելով սխալ ներկայացնել նրա հիվանդության պատմությունը Զորակոչիկների հավաքագրման կետի բժշկական հանձնաժողովին: Այդ հանգամանքներում դիմումատուն ստիպված էր այդ փաստաթղթերն անմիջապես տրամադրել բժշկական հանձնաժողովի նախագահ Ա.Խ.-ին: Այնուամենայնիվ, դա նույնպես չի նպաստել իրավիճակի շտկմանը, քանի որ Ա.Խ.-ի եւ Ա. Ուզ.-ի միջեւ հեռախոսազրույցի ընթացքում վերջինս նշել է, որ փաստաթղթերում նշված ախտորոշումները չեն հաստատվել Էրեբունի բժշկական կենտրոնի փորձագետների հանձնաժողովի կողմից (տե՛ս վերեւում 29-րդ, 33-րդ, 52-րդ եւ 54-րդ պարբերությունները):

102. Այս համատեքստում Դատարանը բավարար չափով հաստատված է համարում, որ Արաբկիրի զինվորական կոմիսարիատի եւ Կենտրոնական բժշկական հանձնաժողովի զինվորական իշխանության մարմինների, այսինքն՝ Ա. Ու.-ի եւ Ա. Ուզ.-ի, ինչպես նաեւ Էրեբունի բժշկական կենտրոնի փորձագիտական բժշկական հանձնաժողովի անդամների, մասնավորապես՝ Հ.Ս.-ի, Ա.Ա.-ի եւ Ա.Ս.-ի վարքագիծը պայմանավորված էր սխալ որոշմամբ կամ անփութությամբ, որի համար Կոնվենցիայի 2-րդ հոդվածով նախատեսված է պետության պատասխանատվությունը (տե՛ս *Զինատուլինն ընդդեմ Ռուսաստանի [Zinatullin v. Russia]*, թիվ 10551/10, § 33, 2020 թվականի հունվարի 28 եւ *Տխելիձեն ընդդեմ Վրաստանի [Tkhelidze v. Georgia]*, թիվ 33056/17, § 59, 2021 թվականի հուլիսի 8): Այս համատեքստում կարեւոր է նշել Ա. Ու.-ի վարքագիծը, այդ թվում՝

նրա բացասական նախատրամադրվածությունը Ա. Մալխասյանի եւ դիմումատուի նկատմամբ իրենց առաջին իսկ հանդիպումներից, այն չափով, որ նա ակնհայտորեն հնարավոր ամեն բան արել էր վերջինիս բանակ զորակոչելու համար՝ ընդհուպ մինչեւ նրա անձնական գործի կեղծումը՝ նախքան այն Զորակոչիկների հավաքագրման կետ ներկայացնելը (տե՛ս վերեւում 33-րդ եւ 54-րդ պարբերությունները):

103. Ելնելով վերոգրյալից՝ Դատարանը գտնում է, որ Ա. Մալխասյանի զորակոչի գործընթացում ներգրավված զինվորական իշխանության մարմինները եւ բժիշկ-մասնագետները, անփութորեն անտեսելով վերջինիս հիվանդության պատմությունը, այդ թվում՝ հիվանդության սրացումը, որն առաջացրել էր շտապ հոսպիտալացման անհրաժեշտություն սույն գործով քննվող իրադարձություններից՝ ավելի պակաս, քան մեկ տարի առաջ (տե՛ս վերեւում մասնավորապես 9-րդ պարբերությունը), ակտիվորեն նպաստել են նրա՝ զինվորական ծառայության համար պիտանի լինելու մասին որոշմանը, որն ակնհայտորեն չէր համապատասխանում նրա առողջական վիճակին: Ինչպես հաստատվել էր քննության ընթացքում, այդ որոշումն ի վերջո հանգեցրել էր ծառայության անցնելուց հաշված օրեր անց նրա մահվանը (տե՛ս վերեւում 7-րդ, 8-րդ, 51-րդ եւ 53-րդ պարբերությունները): Հետեւաբար Դատարանը եզրակացնում է, որ սույն գործում իշխանությունները, Ա. Մալխասյանին զինվորական ծառայություն անցնելու համար զորակոչելով, անհիմն կերպով վտանգել են դիմումատուի որդու կյանքը՝ այդպիսով չկատարելով Կոնվենցիայի 2-րդ հոդվածով նախատեսված՝ կյանքի պաշտպանության իրենց դրական պարտավորությունը:

104. Համապատասխանաբար տեղի է ունեցել Կոնվենցիայի 2-րդ հոդվածի նյութաիրավական հայեցակետի խախտում:

ii) Ընթացակարգային հայեցակետ

105. Դատարանը կրկնում է, որ պետական պաշտոնյաների կողմից իրենց ենթադրյալ անփութության պատճառով տեղի ունեցած մահերի համար հնարավոր պատասխանատվությանն առնչվող դեպքերում արդյունավետ իրավական համակարգ ստեղծելու՝ 2-րդ հոդվածով սահմանված պարտավորությունն անպայմանորեն չի ենթադրում յուրաքանչյուր գործով քրեաիրավական պաշտպանության միջոցների ապահովում (տե՛ս, ի թիվս այլ վճիռների, *Կոտիլայնենը եւ այլք ընդդեմ Ֆինլանդիայի* [*Kotilainen and Others v. Finland*], թիվ 62439/12, § 91, 2020 թվականի սեպտեմբերի 17): Այնուամենայնիվ, կարող են բացառիկ հանգամանքներ լինել, երբ միայն քրեական գործով արդյունավետ քննությամբ հնարավոր կլիներ բավարարել 2-րդ հոդվածով սահմանված ընթացակարգային դրական պարտավորությունը: Այդպիսի հանգամանքներ կարող են առկա լինել, օրինակ, պետական իշխանության մարմինների՝ սխալ որոշմամբ կամ անփությամբ պայմանավորված վարքագծի պատճառով կյանքը կորցնելու կամ վտանգի ենթարկելու դեպքում: Եթե հաստատվել է, որ պետական պաշտոնյաներին կամ մարմիններին վերագրվող անփությունը դուրս է սխալ որոշման կամ անզգուշության շրջանակներից այն առումով, որ նշված իշխանության մարմինները, լիովին գիտակցելով հնարավոր հետեւանքները եւ անտեսելով իրենց վերապահված լիազորությունները, անհրաժեշտ եւ բավարար միջոցներ չեն ձեռնարկել ռիսկերը կանխելու համար, այն փաստը, որ կյանքը վտանգելու համար պատասխանատու անձինք չեն մեղադրվել կամ չեն հետապնդվել քրեական իրավախախտման համար, հավասարազոր է 2-րդ հոդվածի խախտման՝ անկախ նրանից, որ անհատները կարող են իրենց նախաձեռնությամբ կիրառել իրավական պաշտպանության ցանկացած այլ միջոց (տե՛ս վերեւում հիշատակված՝ *Տխելիձեի* գործը, § 59):

106. Դատարանը վերեւում արդեն հաստատել է, որ Ա. Մալխասյանի զորակոչի ընթացակարգին ներգրավված զինվորական իշխանության մարմինների եւ բժիշկ փորձագետների վարքագիծը դուրս էր սխալ որոշման կամ անզգուշության սահմաններից (տե՛ս վերեւում 102-րդ եւ 103-րդ

պարբերությունները): Այնուամենայնիվ, հաշվի առնելով վերոնշյալ նախադեպային իրավունքը՝ միայն քրեական գործով արդյունավետ քննությամբ հնարավոր կլիներ բավարարել 2-րդ հոդվածով սահմանված ընթացակարգային դրական պարտավորությունը:

107. Դատարանը նշում է, որ Ա. Մալխասյանի մահվան փաստի առթիվ քննությունը, որը տեւել է ութ տարի, դադարեցվել է վաղեմության ժամկետի հիմքով Հ.Ս.-ի, Ա.Ա.-ի, Ա.Ս.-ի եւ Ա.Ուզ.-ի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշման, իսկ Ա.Ու.-ի մասով՝ նրա գործողություններում հանցակազմի բացակայության հիմքով 2017 թվականի հուլիսի 19-ին կայացված որոշման արդյունքում (տե՛ս վերեւում 24-րդ, 52-րդ, 53-րդ եւ 54-րդ պարբերությունները):

108. Դատարանը նաեւ նշում է, որ 2015 թվականի հունիսի 5-ի որոշման մեջ Վճռաբեկ դատարանն ըստ էության գտել է, որ քննությունը, որն այդ պահին ընթանում էր արդեն վեց տարի, եղել էր անարդյունավետ եւ անհիմն ձգձգվել էր (տե՛ս վերեւում 48-րդ պարբերությունը):

109. Հաշվի առնելով Վճռաբեկ դատարանի եզրահանգումներն այն մասին, որ դրա որոշումից առաջ քննությունը չէր բավարարում Կոնվենցիայի 2-րդ հոդվածի պահանջները, Դատարանը կուսումնասիրի այդ որոշումն ընդունելուց հետո իրականացված քննությունը (տե՛ս *Բառանինը ու Վուկչեվիչն ընդդեմ Մոնտենեգրոյի* [*Baranin and Vukčević v. Montenegro*], թիվ 24655/18 եւ 24656/18, § 141, 2021 թվականի մարտի 11):

110. Դատարանը նկատում է, որ Վճռաբեկ դատարանի 2015 թվականի հունիսի 5-ի որոշումից հետո քննությունը վերսկսվել է միայն հինգ ամիս անց՝ 2015 թվականի նոյեմբերի 5-ին (տե՛ս վերեւում 49-րդ պարբերությունը): Քննիչը մի շարք քննչական միջոցներ է ձեռնարկել: Մասնավորապես նա լրացուցիչ հարցաքննել է Երեբունի բժշկական կենտրոնի բժիշկներին եւ Ա. Մալխասյանին բանակ զորակոչելու որոշման ընթացակարգում ներգրավված՝ զինվորական բժշկական հանձնաժողովների անդամներին եւ անձնակազմին: Նա նաեւ ձեռք է բերել

բժշկական փորձաքննության լրացուցիչ եզրակացություն, թեեւ վարույթը վերսկսելուց ավելի քան մեկ տարի անց (տե՛ս վերեւում 50-րդ եւ 51-րդ պարբերությունները):

111. Չնայած այդ քննչական միջոցառումներն անկասկած ուղղված էին Վճռաբեկ դատարանի 2015 թվականի նոյեմբերի 5-ի որոշման մեջ հայտնաբերված որոշ թերություններ կարգավորելուն, դրանում ամփոփ նկարագրված մի շարք հարցեր մնացել են չլուծված:

112. Մասնավորապես քննիչը դեռեւս չի պարզել, թե ինչու Էրեբունի բժշկական կենտրոնի բժիշկներն ամբողջապես եւ օբյեկտիվորեն չեն գնահատել Ա. Մալխասյանի առողջական վիճակը, ներառյալ, որն ամենակարեւորն է, թե արդյոք Արաբկիրի զինվորական կոմիսարիատի ներկայացուցիչ Մ.Ս.-ն բժշկական հետազոտություններին իր ներկայությամբ միջամտել էր նրանց մասնագիտական գործունեությանը (տե՛ս վերեւում 48-րդ պարբերությունը, վերջում):

113. Բացի այդ, լրացուցիչ քննության ընթացքում դեռեւս չի պարզվել Ա. Ու.-ի կողմից Ա. Մալխասյանի գործից կարեւոր բժշկական փաստաթղթեր հանելու կարգադրություն տալու նպատակը: Դատարանն այս կապակցությամբ նշում է, որ 2017 թվականի հուլիսի 19-ի՝ Ա.Ու.-ի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշմամբ ընդամենը նշվում է, առանց հղում կատարելու որեւէ կոնկրետ ապացույցի, որ Մ.Ս.-ն չի միջամտել Ա. Մալխասյանի բժշկական հետազոտություններին (տե՛ս վերեւում 54-րդ պարբերությունը):

114. Ինչ վերաբերում է վաղեմության ժամկետի հիմքով Հ.Ս.-ի, Ա.Ա.-ի, Ա.Ս.-ի եւ Ա.Ուզ.-ի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու մասին 2017 թվականի հուլիսի 19-ի որոշմանը, ապա Դատարանը նշում է հետեւյալը:

115. Վճռաբեկ դատարանի 2015 թվականի հունիսի 5-ի որոշմամբ պարզվում է, որ 2014 թվականի հուլիսի 17-ին քննությունն առաջին անգամ դադարեցվելու պահին (տե՛ս վերեւում 42-րդ պարբերությունը) գործի նյութերում առկա էին «բավարար ապացույցներ», որոնք հիմնավորում էին, որ Ա. Մալխասյանի առողջական վիճակն օբյեկտիվորեն եւ ամբողջապես չէր

գնահատվել Էրեբունի բժշկական կենտրոնի բժիշկների կողմից, եւ որ իրականացված հետազոտությունների արդյունքներն ամբողջությամբ արտացոլված չէին նրանց եզրակացության մեջ (տե՛ս վերեւում 48-րդ պարբերությունը)։ Այնուամենայնիվ, միայն 2017 թվականի հուլիսին է քննիչը հաստատված համարել, որ Հ.Ս.-ն, Ա.Ա.-ն եւ Ա.Ս.-ն պատշաճ կերպով չեն կատարել իրենց պարտավորությունները (տե՛ս վերեւում 53-րդ պարբերությունը)։ Ուշագրավ է այն փաստը, որ քննիչը փորձագիտական հանձնաժողովի 2017 թվականի մարտի 20-ի եզրակացությունից բացի ոչ մի նոր ապացույց հատուկ չի հիշատակել 2017 թվականի հուլիսի 19-ի որոշումներում (տե՛ս վերեւում 51-րդ, 52-րդ եւ 53-րդ պարբերությունները)։ Նույնը վերաբերում է այդ ժամանակ Կենտրոնական բժշկական հանձնաժողովի անդամ՝ վիրաբույժ Ա. Ուզ.-ի վարքագծին տրված իրավական գնահատականին։

116. Դատարանը, այնուամենայնիվ, նկատում է, որ չնայած 2017 թվականի մարտի 20-ի փորձագիտական եզրակացության մեջ ավելի կոնկրետ նշվել է, որ Ա. Մալխասյանի Մելորի-Վեյսի համախտանիշի նախկին ախտորոշումը, որը համարվում էր սրտի կանգի հանգեցրած աղեստամոքսային արյունահոսության պատճառ, պետք է ներառված լիներ նրա առողջական վիճակի վերաբերյալ եզրակացության մեջ, 2009 թվականի սեպտեմբերի 17-ի փորձագիտական եզրակացությամբ արդեն եզրակացվել էր, որ 2009 թվականի հուլիսի 4-ին Ա. Մալխասյանի առողջական վիճակի կտրուկ վատթարացումը եւ հետագա մահը հնարավոր է կապված էին սուր աղեստամոքսային արյունահոսության հետ (Մելորի-Վեյսի համախտանիշ), մինչդեռ, ինչպես արդեն նշվել է վերեւում, արդեն հասանելի ապացույց կար այն մասին, որ 2009 թվականի հունիսի 19-ին արված եզրակացությունը թերի է եղել (տե՛ս վերեւում 20-րդ, 41-րդ, 48-րդ եւ 51-րդ պարբերությունները)։

117. Այդ հանգամանքներում պարզ չէ, թե ինչու է քննիչը նախնական մեղադրանք ներկայացրել Կենտրոնական բժշկական հանձնաժողովի թերապեւտ եւ նյարդաբան Տ. Գ.-ին եւ Գ. Հ.-ին, բայց ոչ նույն հանձնաժողովի վիրաբույժ Ա. Ուզ.-ին, որն էլ փաստացի ներկայացրել էր այն եզրակացությունը, որ

Ա. Մալխասյանը վիրաբուժական պաթոլոգիա չունի (տե՛ս վերեւում 52-րդ պարբերությունը), կամ Էրեբունի բժշկական կենտրոնի փորձագիտական բժշկական հանձնաժողովի անդամներին, մասնավորապես՝ Հ.Ս.-ին, Ա.Ա.-ին եւ Ա.Ս.-ին, որոնք կայացրել էին թերի եւ ոչ ճշգրիտ բժշկական եզրակացություն, որն առաջին հերթին հիմք էր ծառայել Կենտրոնական բժշկական հանձնաժողովի որոշման համար (տե՛ս վերեւում 20-րդ եւ 21-րդ պարբերությունները): Արդյունքում այդ անձանց նկատմամբ քրեական հետապնդումը տվյալ իրադարձությունները տեղի ունենալուց ավելի քան ութը տարի հետո դարձել էր ժամկետանց (տե՛ս վերեւում 53-րդ, 56-րդ եւ 60-րդ պարբերությունները):

118. Այս կապակցությամբ Դատարանը կրկնում է, որ Կոնվենցիայի 2-րդ եւ 3-րդ հոդվածներից բխող ընթացակարգային պարտավորությունները դժվար թե կարող են համարվել կատարված այն դեպքում, երբ քննությունը դադարեցվել է, ինչպես տվյալ գործով է, քրեական պատասխանատվության վաղեմության ժամկետի միջոցով, ինչն իշխանության մարմինների անգործության արդյունքն է եղել (տե՛ս վերեւում հիշատակված՝ *Մոկանուն եւ այլք* գործը, § 346 եւ *«1989թ. դեկտեմբերի 21» ասոցիացիան եւ այլք ընդդեմ Ռումինիայի* [*Association "21 December 1989" and Others v. Romania*], թիվ 33810/07 եւ 18817/08, § 144, 2011 թվականի մայիսի 24):

119. Վերոնշյալ դիտարկումները բավարար են, որպեսզի Դատարանին թույլ տան եզրակացնելու, որ իշխանության մարմինները սույն գործով արդյունավետ քննություն չեն իրականացրել:

120. Դատարանը հետեւաբար եզրակացնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 2-րդ հոդվածի ընթացակարգային խախտում:

II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

121. Կոնվենցիայի 41-րդ հոդվածի համաձայն՝

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է անհրաժեշտության դեպքում տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել»:

Ա. Վնասը

122. Դիմումատուն պահանջել է 50 000 եվրո որպես նյութական վնասի հատուցում, որը ներառում է այն աշխատավարձի կորուստը, որը Ա. Մալխասյանը, հնարավոր է, վաստակեր, եթե չմահանար: Նա նաեւ պահանջել է 70 000 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում:

123. Կառավարությունը որեւէ հայտարարություն չի արել:

124. Դատարանը համարում է, որ դիմումատուի՝ բաց թողնված եկամտի փոխհատուցման մասով պահանջը ենթադրյալ բնույթի է եւ այդ իսկ պատճառով պետք է ամբողջությամբ մերժվի: Մյուս կողմից, հաշվի առնելով բացահայտված խախտումների ծանր բնույթը՝ Դատարանը դիմումատուին շնորհում է 35 000 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում՝ գումարած գանձման ենթակա ցանկացած հարկ:

Բ. Ծախսերը եւ ծախքերը

125. Դիմումատուն նաեւ պահանջել է 3 080 եվրո՝ որպես հատուցում ներպետական դատարաններում եւ Դատարանում կրած ծախսերի եւ ծախքերի համար: Այդ պահանջները ներառել են 2 480 եվրո՝ որպես իրավական ծառայությունների դիմաց վճարներ, եւ 600 եվրո՝ թարգմանության եւ փոստային ծառայությունների համար կատարված ծախսեր:

126. Կառավարությունն այս պահանջների առնչությամբ որեւէ

հայտարարություն չի արել:

127. Դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ դիմումատուն ունի ծախսերի ու ծախքերի հատուցման իրավունք այնքանով, որքանով ապացուցվել է, որ դրանք իրականում կատարվել են, անհրաժեշտ են եղել, եւ որ դրանց չափը եղել է ողջամիտ: Սույն գործում, հաշվի առնելով իր տրամադրության տակ գտնվող փաստաթղթերը եւ վերոնշյալ չափորոշիչները, Դատարանը ողջամիտ է համարում շնորհել 2 500 եվրո՝ բոլոր կետերի մասով՝ գումարած դիմումատուից գանձման ենթակա ցանկացած հարկ:

ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱՁԱՅՆ՝

1. *Մերժում է* գանգատը գործերի ցուցակից հանելու մասին Կառավարության պահանջը.

2. *Հայտարարում է* գանգատն ընդունելի.

3. *Վճռում է,* որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 2-րդ հոդվածի խախտում՝ դրա նյութաիրավական հայեցակետի մասով.

4. *Վճռում է,* որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 2-րդ հոդվածի խախտում՝ դրա ընթացակարգային հայեցակետի մասով.

5. *Վճռում է, որ* '

ա) պատասխանող պետությունը վճիռը Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան վերջնական դառնալու օրվանից երեք ամսվա ընթացքում պետք է դիմումատուին վճարի հետեւյալ գումարները, որոնք պետք է փոխարկվեն պատասխանող պետության արժույթով՝ վճարման օրվա դրությամբ գործող փոխարժեքով,

i) ոչ նյութական վնասի դիմաց՝ 35 000 եվրո (երեսունհինգ հազար եվրո)՝ գումարած գանձման ենթակա ցանկացած հարկ,

ii) ծախսերի եւ ծախքերի դիմաց՝ 2 500 եվրո (երկու հազար հինգ

հարյուր եվրո)՝ գումարած դիմումատուից գանձման ենթակա ցանկացած հարկ.

բ) վերը նշված եռամսյա ժամկետի ավարտից հետո՝ մինչեւ վճարման օրը, պետք է հաշվարկվի վերոնշյալ գումարների նկատմամբ պարզ տոկոսադրույք՝ չկատարման ժամանակահատվածում Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի չափով՝ գումարած երեք տոկոսային կետ.

6. *Մերժում է* դիմումատուի՝ արդարացի հատուցման պահանջի մնացած մասը։

Կատարված է անգլերենով եւ գրավոր ծանուցվել է 2022 թվականի հոկտեմբերի 11-ին՝ համաձայն Դատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ եւ 3-րդ կետերի։

Իլզե Ֆրայվըրթ	Գաբրիել Կուչկո-Ստադլմայեր
Քարտուղարի տեղակալ	Նախագահ